# ՀՖՖ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026Թ.ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 6

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ... 9

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները ... 9
Հոդված 2. Անձանց շրջանակը և ֆուտբոլային սուբյեկտները ... 9
Հոդված 3. Կիրառելի իրավական շրջանակը ... 9

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ... 11

Հոդված 4. Ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների տեսակները ... 11
Հոդված 5. Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների տեսակները ... 12
Հոդված 6. Տուգանք ... 13
Հոդված 7. Տեխնիկական պարտություն ... 14
Հոդված 8. Հայցային վաղեմության ժամկետը ... 14

ԳԼՈՒԽ 3. ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ... 15

Հոդված 9. Վարքագծի ընդհանուր սկզբունքները ... 15
Հոդված 10. Խաղերի ամբողջականություն և պայմանավորված խաղեր ... 15
Հոդված 11. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, կազմակերպման փորձ կատարելը կամ դրա մասին իմանալը և չհայտնելը ... 16
Հոդված 12. Ռասիզմ և այլ խտրականության դրսևորում ... 17
Հոդված 13. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը ... 18
Հոդված 14. Որակազրկված ֆուտբոլային սուբյեկտների իրավունքներն ու սահմանափակումները ... 21
Հոդված 15. Խաղի ժամանակահատվածում կարգուկանոնը և անվտանգությունը ... 21

ԳԼՈՒԽ 4. ԷԹԻԿԱ ԵՎ ԱՐԴԱՐ ԽԱՂ ... 23

Հոդված 16. Էթիկայի սկզբունքները, շրջանակը և ընդհանուր առանձնահատկությունները ... 23
Հոդված 17. Նվերների փոխանակման կարգը ... 23
Հոդված 18. Կաշառակերություն և կոռուպցիա ... 23

ԳԼՈՒԽ 5. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ... 24

Հոդված 19. Կարգապահական խախտման հասկացությունը և ամբողջականությունը ... 24
Հոդված 20. Կարգապահական պատասխանատվություն ... 24
Հոդված 21. Կարգապահական պատասխանատվության սկզբունքները ... 24
Հոդված 22. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները ... 25

Հոդված 23. Պատասխանատվության միջոցները՝ մի քանի խախտում կատարելու դեպքում ..... 25
Հոդված 24. Պատասխանատվության միջոցների պայմանական կիրառում ..... 25
Հոդված 25. Պատասխանատվության միջոցի գործողությունը ժամանակի մեջ ..... 26
Հոդված 26. Կարգապահական մարմինների հատուկ իրավասությունը ..... 26
Հոդված 27. Հրահանգներ ..... 26
Հոդված 28. Վիճարկումը ..... 26

**ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ..... 28**

Հոդված 29. Կարգապահական մարմիններ ..... 28
Հոդված 30. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտե ..... 28
Հոդված 31. ՀՖՖ բողոքարկման կոմիտե ..... 28
Հոդված 32. Անկախություն ..... 29
Հոդված 33. Կարգապահական մարմինների անդամների ինքնաբացարկը ..... 29
Հոդված 34. Կարգապահական մարմինների որոշում ընդունելու կարգը ..... 29
Հոդված 35. Կարգապահական գրասենյակը ..... 29
Հոդված 36. Կարգապահական մարմինների անդամների և գրասենյակի աշխատակազմի պատասխանատվությունը ..... 29

**ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 30**

Հոդված 37. Կարգապահական վարույթի լեզուն ..... 30
Հոդված 38. Նիստի հրավիրում, ֆուտբոլային սուբյեկտների և վարույթի այլ մասնակիցների իրավունքներ ու պարտականություններ, լսումներ, որոշումներ, հաղորդակցություն և գաղտնիություն ..... 30
Հոդված 39. Ներկայացուցչություն ..... 31
Հոդված 40. Կարգապահական մարմինների հետ համագործակցելու պարտականությունը ..... 31
Հոդված 41. Ժամկետները ..... 31
Հոդված 42 . Ապացուցումը կարգապահական վարույթում ..... 32
Հոդված 43. Ապացույցների տեսակները ..... 32
Հոդված 44. Վկաները ..... 32
Հոդված 45. Անանուն վկաները ..... 33
Հոդված 46 Անանուն վկաների նույնականացումը ..... 33
Հոդված 47. Ժամանակավոր միջոցներ ..... 33
Հոդված 48. Որոշումներ ..... 34

**ԳԼՈՒԽ 8. ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ..... 35**

Հոդված 49. Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և հարուցված վարույթի վերաբերյալ ծանուցումը ..... 35
Հոդված 50. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեում վարույթի ձևը ..... 35

**ԳԼՈՒԽ 9. ՎԱՐՈՒՅԹԸ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ..... 36**

Հոդված 51. Բողոքարկումները, ժամկետները և վճարները ..... 36

ՀՈԴՎԱԾ 52. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ........ 36
ՀՈԴՎԱԾ 53. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԵՏԱՎԱՆՔՆԵՐԸ ........ 36
ՀՈԴՎԱԾ 54. ԲՈՂՈՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ........ 36
ՀՈԴՎԱԾ 55. ԼՍՈՒՄՆԵՐ ........ 37
ՀՈԴՎԱԾ 56. ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ........ 37
ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾ ........ 38

Ա. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 38

Բ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ, ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 54

Գ. ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 57

Դ. ԱՅԼ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԱԿՈՒՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ........ 59

Ե. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 60

Զ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 77

Է. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 83

Ը. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 92

Թ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԵՆԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 94

Ժ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........ 106

Ի. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՖՈՒՏԶԱԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ........................................................................................................ 108

Լ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՖՈՒՏԶԱԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........................................................................................ 113

Խ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ .......................................................... 116

Ծ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ........................................................................................ 122

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՖՖ** | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն |
| **ՖԻՖԱ** | Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա |
| **ՈՒԵՖԱ** | Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն |
| **ԻՖԱԲ** | Ֆուտբոլի ասոցիացիաննների միջազգային խորհուրդ |
| **ՀՊԼ** | Հայաստանի Պրեմիեր լիգա |
| **ԱԽ** | Հայաստանի Առաջին խումբ |
| **ՀԳԽ** | Հայաստանի Գավաթի խաղարկություն |
| **ՍԳԽ** | Սուպեր գավաթի խաղարկություն |
| **ԿԷԿ/Կոմիտե** | ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտե |
| **ՀՖՖ Գործադիր կոմիտե** | ՀՖՖ գործադիր մարմին |
| **Ակումբ** | Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին |
| **Առաջնություն** | Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտբոլի ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն |
| **Պաշտոնական խաղեր** | Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ |
| **Մրցումներ** | ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր (Հայաստանի Պրեմիեր լիգա, Առաջին խմբի առաջնություն, Հայաստանի Գավաթի խաղարկություն, մանկապատանեկան ֆուտբոլի առաջնություններ, սիրողական ֆուտբոլի առաջնություն, ֆուտզալի առաջնություն, կանանց ֆուտբոլի առաջնություն, աղջիկների մանկապատանեկան ֆուտբոլի առաջնություններ) |
| **Պատվիրակ** | Խաղի կազմակերպման և անցկացման հարցերով պատասխանատու |
| **Տեսուչ** | Մրցավարի, մրցավարի օգնականների, և չորրորդ պաշտոնյայի գործողությունները գնահատող ՀՖՖ ներկայացուցիչ |
| **Մրցավար** | ՀՖՖ կողմից նշանակված հանդիպման մրցավար |
| **Մրցավարի օգնական** | ՀՖՖ կողմից նշանակված հանդիպման մրցավարների օգնական |
| **Չորրորդ պաշտոնյա** | ՀՖՖ կողմից նշանակված հանդիպման չորրորդ պաշտոնյա |

| | |
|---|---|
| **Հանդիպման կազմակերպիչ** | Ակումբ (հյուրընկալող, դաշտի տեր), որն իրականացնում է հանդիպման անցկացման կազմակերպչական և այլ առնչվող աշխատանքները |
| **Ակումբի պաշտոնյա** | Ակումբի աշխատակից՝ բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա |
| **Թիմի անձնակազմ** | Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամներ, ովքեր հայտավորված են ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով |
| **Անձ** | Ֆիզիկական և իրավաբանական անձ |
| **Փորձագետ** | ՀՖՖ կողմից ընտրված անձ և/կամ խումբ, ով(քեր) իր(ենց) մասնագիտական և/կամ աշխատանքային ունակություններից ելնելով կարող են վարույթի շրջանակներում ներկայացնել կարգապահական մարմնի կողմից բարձրացված հարցի վերաբերյալ երզակացություն |
| **Խաղի կանոններ** | Ֆուտբոլ խաղի գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի |
| **Մրցաշրջան** | Ֆուտբոլային տարի, որը մեկնարկում է յուրաքանչյուր օրացուցային տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին |
| **Խաղաշրջան** | Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակահատված |
| **Մարզադաշտ** | ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը |
| **Հեռարձակում** | Ֆուտբոլային հանդիպման՝ մարզադաշտից տեսանկարահանման և եթերի տրամադրման, ինչպես նաև համացանցի միջոցով ուղիղ եթերի հեռարձակման ապահովումը |
| **Հանդիպման մասնակից** | Ֆուտբոլիստ, ակումբի պաշտոնյա, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար |
| **Արտակարգ իրավիճակներ/**<br>**Ֆորս-մաժոր** | Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակեպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը |
| **Խաղի ժամանակահատված** | Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղավարտից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված |

**Ծանոթագրություն.** [1] *Յուրաքանչյուր եզակի հասկացությունը կիրառվում է նաև հոգնակի տարբերակով և հակառակը:*

[2] *Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգում, օգտագործված հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչպես սահմանված է ՀՖՖ կանոնադրությամբ և ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կանոնակարգերով:*

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

### Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները

1. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) խնդիրը պրոֆեսիոնալ և սիրողական ֆուտբոլի, այդ թվում՝ կանանց ֆուտբոլի, մանկապատանեկան, ֆուտզալի կազմակերպման և անցկացման համակարգը, ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի, գործող ԻՖԱԲ խաղի կանոնների դրույթները, ինչպես նաև համընդհանուր ճանաչում գտած մարզական սկզբունքներն ու կանոնները, մարզական կարգապահությունը և ֆուտբոլի լավագույն ավանդույթները պահպանելն է:
2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված խնդրի իրականացման համար Կանոնակարգը սահմանում է ֆուտբոլային բնագավառում կարգապահական խախտումները, պատասխանատվության միջոցները, կարգավորում է տույժերի կիրառումը և ՀՖՖ կարգապահական մարմինների գործողությունները և կիրառվող ընթացակարգերը:
3. Կանոնակարգը բխում է ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կանոնադրություններով և կանոնակարգերով սահմանված սկզբունքներից և ընդհանուր դրույթներից:
4. Կանոնակարգը հստակեցնում և կարգավորում է մրցումների կազմակերպման և անցկացման ընդհանուր սկզբունքները և մրցումների մասնակիցների մարզական կարգապահությունը, սահմանում պատասխանատվության միջոցները:
5. Կանոնակարգի դրույթները տարածվում են ՀՖՖ կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր մրցումների վրա:
6. Կանոնակարգի դրույթներին ենթարկվում են ՀՖՖ հովանու ներքո կազմակերպված մրցումների մասնակից բոլոր ակումբները, ֆուտբոլիստները, թիմերի անձնակազմի անդամները, ակումբների պաշտոնյաները, ակումբների իրական շահառուները և/կամ այն անձինք, որոնք իրենց գործողությունների արդյունքում ուղղակի կամ անուղղակի կանխորոշում են ակումբի գործունեության ընթացքը, ինչպես նաև թիմերի երկրպագուները: Կանոնակարգի դրույթներին են ենթարկվում նաև խաղը սպասարկող անձնակազմը, բոլոր այն անձինք ովքեր ընտրվել են կամ նշանակվել ՀՖՖ կողմից կանոնադրությամբ և այլ կանոնակարգերով գործառույթներ իրականացնելու համար և ֆուտբոլային համակարգին առնչվող այլ սուբյեկտները՝ ներառյալ արտոնագրված խաղերի գործակալները և միջնորդները, եթե ՀՖՖ այլ կանոնակարգերով սահմանված չէ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու այլ՝ հատուկ նորմեր:
7. Կանոնակարգը կիրառվում է ՀՖՖ կանոնադրության, կանոնակարգերի, հրահանգների, որոշումների կամ շրջաբերականների ցանկացած խախտման դեպքում, եթե այն ենթակա չէ ՀՖՖ այլ մարմինների իրավասությանը:

### Հոդված 2. Անձանց շրջանակը և Ֆուտբոլային սուբյեկտները

1. Սույն Կանոնակարգի իմաստով Ֆուտբոլային սուբյեկտներն են ՀՖՖ-ն, ՀՖՖ հովանու ներքո կազմակերպված մրցումների մասնակից բոլոր ակումբները, ակումբների սեփականատերերը, ակումբների նախագահները, ակումբների ղեկավարության բոլոր անդամները, ակումբների իրական շահառուները կամ այն անձինք, որոնք իրենց գործողությունների արդյունքում ուղղակի կամ անուղղակի կանխորոշում են ակումբի գործունեության ընթացքը, թիմերը, ֆուտբոլիստները, մրցավարները, տեսուչները, պատվիրակները, թիմերի անձնակազմերի անդամները, ակումբների բոլոր պաշտոնյաները, ինչպես նաև ֆուտբոլային համակարգին առնչվող այլ անձինք:
2. Բացառիկ դեպքերում, երբ ֆուտբոլային սուբյեկտ չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մարզադաշտում դրսևորվում է անհարգալից վերաբերմունք ֆուտբոլային սուբյեկտների, ինչպես նաև երկրպագուների նկատմամբ և որի ինքնությունը հնարավոր է լինում պարզել, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավունք ունի վերջինիս ենթարկելու կարգապահական պատասխանատվության՝ Կանոնակարգով սահմանված կարգով:

### Հոդված 3. Կիրառելի իրավական շրջանակը

1. Կարգապահական մարմինների որոշումների իրավական հիմք են հանդիսանում
   1.1. Առաջին հերթին՝ ՀՖՖ կանոնադրությամբ, կանոնակարգերով, հրահանգներով, որոշումներով և շրջաբերականներով սահմանված դրույթները, ինչպես նաև ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ համապատասխան կանոնակարգերով, հրահանգներով, որոշումներով և շրջաբերականներով սահմանված դրույթները,

1.2. Երկրորդ հերթին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերաբերելի դրույթները, այդ թվում վերաբերելի նախադեպային որոշումները:

2. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելիս Կարգապահական մարմինը պետք է կիրառի կարգապահական խախտման կատարման պահին գործող համապատասխան դրույթները, եթե պատճառաբանված որոշմամբ համապատասխան կարգապահական մարմինը չի հանգում, որ գործի արդյունավետ լուծման անհրաժեշտությունից ելնելով այն ենթակա է քննման այդ պահին գործող դրույթներով: Յուրաքանչյուր դեպքում ընթացակարգային առումով պետք է կիրառվեն այն դրույթները, որոնք գործում են համապատասխան կարգապահական խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու պահին:

# ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

## Հոդված 4. Ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների տեսակները

1. Ֆիզիկական անձ Ֆուտբոլային սուբյեկտների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական պատասխանատվության միջոցները.

   1.1. նախազգուշացում,
   1.2. նկատողություն,
   1.3. տուգանք,
   1.4. որակազրկում խաղի մասնակցությունից՝ սահմանված խաղերի քանակով կամ սահմանված որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով,
   1.5. կասեցում որոշակի գործառույթների, ծառայողական պարտականությունների իրականացումից՝ սահմանված խաղերի քանակով կամ սահմանված որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով,
   1.6. ֆուտբոլային ցանկացած գործունեություն ծավալելու, ցանկացած ֆուտբոլային գործունեության մասնակցելու արգելք՝ որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով,
   1.7. նվաճած տիտղոսի և/կամ մրցանակի չեղարկում, պարգևների վերադարձ,
   1.8. մարզադաշտ մուտք գործելու արգելք՝ որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով,
   1.9. «Անցանկալի անձ» (Persona non grata) հայտարարում,
   1.10. ֆուտբոլային հասարակական գործունեության իրականացում:

2. Նախազգուշացում է համարվում այն կարգապահական պատասխանատվության միջոցը, որը կիրառվում է նվազ վտանգավորություն ունեցող կարգապահական խախտումների դեպքում և կարող է վերաբերել միայն Ֆուտբոլային սուբյեկտի կողմից առաջին անգամ թույլ տրված կարգապահական խախտմանը: Նախազգուշացում ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ նույն կարգապահական խախտումը թույլ տալու դեպքում «նախազգուշացում» կարգապահական պատասխանատվության միջոցն այլևս չի կարող կիրառվել:

3. Նկատողություն է համարվում այն կարգապահական պատասխանատվության միջոցը, որը կիրառվում է միջին վտանգավորություն ունեցող կարգապահական խախտումների դեպքում և կարող է վերաբերել Ֆուտբոլային սուբյեկտի կողմից առաջին անգամ թույլ տրված կարգապահական խախտմանը: Նկատողություն ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:

4. Տուգանքն այն դրամական գումարն է, որը որպես պատասխանատվության միջոց կիրառվում է Կարգապահական մարմինների կողմից Կանոնակարգով նախատեսված խախտումներն իրականացնելու համար:

5. Սահմանված խաղերի քանակով կամ սահմանված որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով խաղի մասնակցությունից որակազրկում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտը զրկվում է որոշակի կամ անորոշ ժամանակահատվածում կամ որոշված քանակով խաղերին մասնակցելու իրավունքից և/կամ հնարավորությունից:

6. Սահմանված խաղերի քանակով կամ սահմանված որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով որոշակի գործառույթների, ծառայողական պարտականությունների իրականացումից կասեցում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտը զրկվում է որոշակի կամ անորոշ ժամանակահատվածում կամ որոշված խաղերի քանակով գործունեություն, ծառայողական պարտականություններ իրականացնելու իրավունքից և/կամ հնարավորությունից, այդ թվում նաև հանդերձարաններ մտնելու և տեխնիկական գոտում գտնվելու իրավունքի կասեցում:

7. Որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով Ֆուտբոլային ցանկացած գործունեություն ծավալելու արգելք է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտներին արգելվում է որևէ ֆուտբոլային գործունեության ծավալումը:

8. Որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով մարզադաշտ մուտք գործելու արգելք է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտներին արգելվում է որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով կամ որոշակի խաղերին կամ մինչև որոշակի հանգամանքների առաջացումը մարզադաշտ մուտք գործելը:

9. «Անցանկալի անձ» (Persona non grata) հայտարարում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտներին որոշակի կամ անորոշ ժամանակահատվածով արգելվում է որևէ ֆուտբոլային գործունեության ծավալումը, մարզադաշտ մուտք գործելը և կիրառվում է բացառիկ՝ ազգային ֆուտբոլային շարժմանը վնաս հասցնող գործողությունների դեպքում, երբ տվյալ Ֆուտբոլային սուբյեկտի ներկայությունը դառնում է ֆուտբոլային ոլորտում անընդունելի: Մինչև Կանոնակարգի ուժի մեջ մտնելն այլ խմբագրությամբ կանոնակարգերով սահմանված կարգով արդեն իսկ «անցանկալի անձ» հայտարարված ֆուտբոլային սուբյեկտի նկատմամբ սույն հոդվածով նախատեսված դրույթները չեն կիրառվում:

10. Ֆուտբոլային հասարակական գործունեություն իրականացնել է համարվում այն կարգապահական միջոցը, որի դեպքում Ֆուտբոլային սուբյեկտների վրա դրվում է որոշակի ժամանակահատվածում որոշակի ֆուտբոլային հասարակական գործունեություն իրականացնելու պարտականություն:

### Հոդված 5. Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների տեսակները

1. Իրավաբանական անձ ֆուտբոլային սուբյեկտների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցները.
    1.1. տուգանք,
    1.2. ֆուտբոլիստի տրանսֆեր (տեղափոխություն) իրականացնելու արգելք,
    1.3. ֆուտբոլիստի գրանցում իրականացնելու արգելք,
    1.4. խաղի անցկացում առանց հանդիսատեսի,
    1.5. խաղի անցկացում չեզոք մարզադաշտում,
    1.6. խաղի անցկացման արգելք կոնկրետ մարզադաշտում,
    1.7. խաղի արդյունքի անվավեր ճանաչում,
    1.8. մրցումներից հեռացում,
    1.9. տեխնիկական պարտության գրանցում,
    1.10. միավորների նվազեցում,
    1.11. իջեցում ավելի ցածր կարգի առաջնություն:
2. Տուգանքը դրամական գումարն է, որը Կարգապահական մարմինների կողմից նշանակվում է Կանոնակարգով նախատեսված խախտումները կատարելու համար:
3. Տրանսֆեր (տեղափոխություն) իրականացնելու արգելք է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում ակումբներին որոշակի ժամկետով արգելվում է ֆուտբոլիստների տրանսֆերի (տեղափոխության) իրականացումը:
4. Գրանցում իրականացնելու արգելք է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում ակումբներին որոշակի ժամկետով արգելվում է ֆուտբոլիստների գրանցման իրականացումը:
5. Առանց հանդիսատեսի խաղի անցկացում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում, արգելվում է կոնկրետ խաղին կամ խաղերին երկրպագուների ներկայությունը և/կամ մուտքը մարզադաշտի սեկտորներ:
    5.1. Եթե այլ բան նախատեսված չէ Կարգապահական մարմինների որոշմամբ, ապա տվյալ միջոցի կիրառման դեպքում մարզադաշտի մուտք գործելու իրավունք ունեն միայն.

5.1.1. յուրաքանչյուր ակումբի մինչև 50 ներկայացուցիչ՝ ներառյալ խաղի արձանագրությունում նշված անձինք,
5.1.2. խաղի պատշաճ կազմակերպմանն առնչվող անձինք, որոնց ցանկը խաղից առնվազն երկու օր առաջ պետք է ներկայացվի ՀՖՖ ֆուտբոլի դեպարտամենտի հաստատմանը:

6. Չեզոք մարզադաշտում խաղի անցկացում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում հանդիպումն անցկացվում է որևէ չեզոք մարզադաշտում:
7. Կոնկրետ մարզադաշտում խաղի անցկացման արգելք է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում արգելվում է խաղի անցկացումը տվյալ մարզադաշտում:
8. Խաղի արդյունքի անվավեր ճանաչում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում խաղի արդյունքը չեղարկվում է: Խաղի արդյունքի անվավեր ճանաչման արդյունքում խաղի մասնակից թիմերից թե՛ մեկին, և թե՛ մյուսին էլ կարող է գրանցվել տեխնիկական պարտություն:
9. Մրցումներից հեռացում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի կիրառման դեպքում թիմը զրկվում է մրցումներին հետագա մասնակցության իրավունքից:
10. Տեխնիկական պարտության գրանցում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի կիրառման դեպքում խաղը համարվում է կայացած, մեղավոր թիմին գրանցվում է պարտություն 0:3 հաշվով (0:5 ֆուտզալի մրցումներում), մրցակցին գրանցվում է հաղթանակ 3:0 հաշվով (5:0 ֆուտզալի մրցումներում): Խաղում խփած գոլերը չեղյալ են համարվում, իսկ կիրառված կարգապահական պատժամիջոցները մնում են ուժի մեջ: Եթե մրցակցի առավելությունը հաշվի մեջ 3 գոլից ավելին է, ապա խաղի հաշիվը մնում է ուժի մեջ և խփած գոլերը հաշվարկվում են:
11. Միավորների նվազեցում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի կիրառման դեպքում նվազեցվում են որոշակի մրցաշրջանի մրցաշարային աղյուսակում թիմի միավորները:
12. Ավելի ցածր կարգի առաջնություն իջեցում է համարվում կարգապահական պատասխանատվության այն միջոցը, որի դեպքում թիմը տեղափոխվում է ավելի ցածր խմբի առաջնություն:

## Հոդված 6. Տուգանք

1. Տուգանքը դրամական գումար է, որը Կարգապահական մարմինների կողմից նշանակվում է Կանոնակարգով նախատեսված դեպքերում, սահմաններում և կարգով, որը ենթակա է վճարման ՀՖՖ համապատասխան բանկային հաշվին:
2. Կանոնակարգի շրջանակներում տուգանքի բազային տուրքի չափը սահմանվում է 1,000 (հազար) ՀՀ դրամ:
3. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից նշանակված տուգանքը պետք է վճարվի համապատասխան որոշման կայացման պահից 30 օրվա ընթացքում, եթե որոշումը չի բողոքարկվել սույն Կանոնակարգով սահմանված կարգով: Եթե բողոքարկման արդյունքում պահպանվում է տուգանքը վճարելու պարտավորությունը, ապա այն պետք է կատարվի ՀՖՖ բողոքարկման կոմիտեի համապատասխան որոշման կայացման պահից 30 օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում յուրաքանչյուր 30 օր անց տուգանքի չափը մեխանիկորեն ավելանում է 25%-ով, բայց ոչ ավել, քան սահմանված տուգանքի կրկնապատիկը:
4. ՀՖՖ-ն իրավունք ունի ցանկացած փուլում ակումբներին հասանելիք գումարներից կատարելու նշանակված տուգանքների հաշվանց:
5. Սահմանված կարգով և ժամկետում տուգանքը վճարված լինելու հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է պատասխանատվության ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը:
6. Ֆուտբոլային սուբյեկտները պետք է տուգանքի վճարումը հավաստող համապատասխան անդորրագրերը ներբեռնեն Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ հատուկ սահմանված բաժնում:

### Հոդված 7. Տեխնիկական պարտություն

1. Թիմին տեխնիկական պարտություն կարող է տրվել այն դեպքերում, երբ.

   1.1. թիմն անհարգելի պատճառով չի ներկայանում խաղին,
   1.2. թիմը խաղի ժամանակահատվածում ինքնակամ լքել է խաղադաշտը,
   1.3. հանդիպման ժամանակահատվածում մրցակից թիմերից որևէ մեկի ֆուտբոլիստի, թիմի անձնակազմի անդամի և/կամ պաշտոնատար անձի ոչ պատշաճ/ոչ սպորտային գործողության/անգործության պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել,
   1.4. խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձի և/կամ թիմի անձնակազմի անդամը և/կամ ֆուտբոլիստը կատարել է այնպիսի գործողություն/անգործություն, որը մարզադաշտում պատճառ է դարձել անկարգության/ների, որի պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել,
   1.5. խաղի ժամանակահատվածում տեխնիկական գոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելու հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել,
   1.6. ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը չի կայացել և/կամ չի շարունակվել,
   1.7. խաղի ժամանակահատվածում դաշտի տեր կամ հյուր թիմի երկրպագուների կողմից մարզադաշտում պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ են պայթեցվել, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել,
   1.8. խաղի ժամանակահատվածում որևէ թիմի երկրպագուների կողմից մարզադաշտում լազերներ կամ այլ լուսարձակող միջոցներ են օգտագործվել, որի հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել,
   1.9. խաղին որակազրկված կամ չհայտավորված ֆուտբոլիստ և/կամ թիմի անձնակազմի անդամ և/կամ ակումբի պաշտոնյա է մասնակցել,
   1.10. Կանոնակարգում չնշված այլ անհարգելի պատճառ/ներ/ով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել:

### Հոդված 8. Հայցային վաղեմության ժամկետը

1. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն են՝

   1.1. մեկ տարի՝ խաղադաշտում կամ դրա անմիջական հարևանությամբ թույլ տրված խախտումների համար,
   1.2. տասը տարի՝ դոպինգային խախտումների համար,
   1.3. հինգ տարի՝ մյուս բոլոր խախտումների համար:

2. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, խարդախությունը, կաշառքը և կոռուպցիան ենթակա չեն վաղեմության ժամկետի:

3. Վերը նշված վաղեմության ժամկետը կասեցվում է բոլոր ընթացակարգային ակտերով՝ յուրաքանչյուր ընդհատումից հետո նորից սկսելով:

## ԳԼՈՒԽ 3. ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

### Հոդված 9. Վարքագծի ընդհանուր սկզբունքները

1. Ֆուտբոլային բոլոր սուբյեկտները պետք է հարգեն գործող ԻՖԱԲ խաղի կանոնները, ինչպես նաև ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կանոնադրությունները, կանոնակարգերը, հրահանգները, որոշումներն ու շրջաբերականներով նախատեսված վարքագծի կանոնները: և պահպանեն էթիկական վարքագծի, հավատարմության, ամբողջականության և սպորտային վարքագծի սկզբունքները:
2. Որպես օրինակ սույն սկզբունքների խախտումը կատարվում է այն անձանց կողմից
   - 1.1. ովքեր ներգրավված են կամ փորձում են ներգրավված լինել խարդախության մեջ, ակտիվ կամ պասիվ կաշառակերության և/կամ կոռուպցիայի մեջ,
   - 1.2. ում վարքագիծը վիրավորական է կամ այլ կերպ խախտում է պատշաճ վարքագծի հիմնական կանոնները,
   - 1.3. ովքեր օգտագործում են սպորտային միջոցառումները ոչ սպորտային բնույթի դրսևորումների համար,
   - 1.4. ում վարքագիծը՝ անկախ կատարման վայրից և ժամանակահատվածից, վարկաբեկում է ֆուտբոլ մարզաձևը, ֆուտբոլային սուբյեկտներին և ՀՖՖ հեղինակությունը, ՀՖՖ համապատասխան մարմիններին և ղեկավար կազմին,
   - 1.5. ովքեր չեն կատարում ՀՖՖ Գործադիր կոմիտեի և մնացած բոլոր մարմինների կողմից ընդունված որոշումները և/կամ հրահանգները, և/կամ շրջաբերականները, և/կամ վարքագծի նորմեր սահմանող այլ փաստաթղթերը, կամ Սպորտային արբիտրաժային դատարանի որոշումները,
   - 1.6. ովքեր չեն հետևում խաղը սպասարկող անձնակազմի հրահանգներին,
   - 1.7. ովքեր չեն ցուցաբերում հարգանք մրցակիցների, մրցավարների, վերջիններիս կողմից կայացված որոշումների նկատմամբ:
   - 1.8. ովքեր պատասխանատու են հաշվետվությունները/արձանագրություններն ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու համար, կամ խաղի ուշ մեկնարկի համար,
   - 1.9. ովքեր պատասխանատու են խաղի ընթացքի խոչընդոտման, ընդհատման կամ դադարեցման համար,
   - 1.10. ովքեր հայտավորում են մի ֆուտբոլային սուբյեկտի, ով չունի խաղալու իրավունք,
   - 1.11. ովքեր լիովին չեն համագործակցում խաղի պատվիրակի և/կամ տեսուչի հետ կամ կարգապահական մարմինների հետ՝ կարգապահական հետաքննության կամ վարույթի ընթացքում արված ցանկացած հարցման կամ պահանջի առնչությամբ:
3. Վերոնշյալ սկզբունքների և կանոնների խախտումները պատժվում են կարգապահական պատասխանատվության միջոցներով:

### Հոդված 10. Խաղերի ամբողջականություն և պայմանավորված խաղեր

1. Բոլոր Ֆուտբոլային սուբյեկտները, պետք է զերծ մնան այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել խաղի և մրցաշարի ընթացքը և պետք է համագործակցեն ՀՖՖ-ի հետ՝ կանխելու նմանատիպ դեպքերը:
2. Ֆուտբոլային սուբյեկտներին, ինչպես նաև ՀՖՖ աշխատակիցներին և/կամ ՀՖՖ կողմից ընտրված և/կամ նշանակված այլ անձանց արգելվում է խաղադրույք կատարել:
3. Խաղերի և մրցաշարերի ընթացքը վնասվում է բոլոր այն դեպքերում, երբ անձը
   - 3.1. իր գործողություններով կամ անգործությամբ ուղղակի կամ անուղղակի կերպով փորձում է ազդել հանդիպման կամ մրցաշարի արդյունքի վրա՝ օգուտ ստանալով դրանից,
   - 3.2. ուղղակի կամ անուղղակի կերպով խաղադրույք է կատարում մրցաշարի խաղի վրա կամ ունի անմիջական կամ ոչ անմիջական ֆինանսական հետաքրքրություն (շահագրգռվածություն),
   - 3.3. չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ տարածում է այնպիսի տեղեկություն, որը հանրային հրապարակման ենթակա չէ և կարող է վնաս հասցնել խաղի կամ մրցաշարի ընթացքին,
   - 3.4. անմիջապես, կամավոր չի տեղեկացնում ՀՖՖ-ին (առանց որևէ հիմնավոր պատճառի ուշացմամբ պայմանավորված), որ առնչվել է այնպիսի գործողությունների կամ անգործության, որի նպատակն է անօրինական կերպով ազդել հանդիպման կամ մրցաշարի ընթացքի և/կամ արդյունքի վրա,
   - 3.5. անմիջապես, կամավոր չի տեղեկացնում ՀՖՖ-ին (առանց որևէ հիմնավոր պատճառի ուշացմամբ պայմանավորված) վերոգրյալ և/կամ նմանատիպ հանգամանքների առկայության մասին:

4. Ակումբը կարող է ենթարկվել կարգապահական միջոցների և/կամ հրահանգների, եթե նրա անդամներից, խաղացողներից կամ պաշտոնյաներից մեկը վերը նշված պարբերությունում նկարագրված վարքագիծն է դրսևորել:

### Հոդված 11. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, կազմակերպման փորձ կատարելը կամ դրա մասին իմանալը և չհայտնելը

1. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, մասնավորապես՝ ֆուտբոլիստներին, մրցավարներին, թիմերի անձնակազմին, ակումբի և թիմի ղեկավարներին կամ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ (ոչ սիրողական) ֆուտբոլի մրցումների մյուս մասնակիցներին, կազմակերպիչներին և ֆուտբոլային այլ սուբյեկտներին անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ որևէ այլ անձի համար դրամ, տարադրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը կամ նույն անձանց կողմից ստանալը՝ այդ մրցումների արդյունքների վրա ազդելու նպատակով առաջացնում է.

    1.1. Ֆիզիկական անձանց համար՝

        1.1.1. տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (2,000,000-ից մինչև 5,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
        1.1.2. որակազրկում /ֆուտբոլիստի համար/ 1-ից 2 տարի ժամկետով, և/կամ
        1.1.3. որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք՝ 3 տարուց մինչև ցմահ ժամկետով:

    1.2. Իրավաբանական անձանց համար՝

        1.2.1. տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասնհինգհազարապատիկի (5,000,000-ից մինչև 15,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
        1.2.2. թիմի միավորների նվազեցում 12 միավորի չափով, և/կամ
        1.2.3. նվաճած մրցանակներից զրկում, և/կամ
        1.2.4. տվյալ առաջնությանը մասնակցությունից զրկում, և/կամ
        1.2.5. թիմին ավելի ցածր առաջնություն տեղափոխում, և/կամ
        1.2.6. որևէ ֆուտբոլային առաջնությանը մասնակցելու, թիմեր ներկայացնելու արգելք՝ 1-ից 3 տարի ժամկետով:

2. Յուրաքանչյուր պայմանավորված խաղի արդյունք չեղյալ է համարվում և մեղավոր թիմին տեխնիկական պարտություն է հայտարարվում, իսկ մրցակցին՝ հաղթանակ:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված արարքների փորձ կատարելն առաջացնում է.

    3.1. Ֆիզիկական անձանց համար՝

        3.1.1. տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի (500,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
        3.1.2. որակազրկում /ֆուտբոլիստի համար/՝ 3 ամսից 1 տարի ժամկետով, և/կամ
        3.1.3. որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք՝ 1-ից 2 տարի ժամկետով:

    3.2. Իրավաբանական անձանց համար՝

        3.2.1. տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (2,000,000-ից մինչև 5,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
        3.2.2. թիմի միավորների նվազեցում 6 միավորի չափով, և/կամ
        3.2.3. նվաճած մրցանակներից զրկում:

4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված արարքների մասին իմանալը և չհայտնելն առաջացնում է՝

    4.1. Որակազրկում՝ 3 ամսից 1 տարի ժամկետով՝ ֆուտբոլիստների համար, և/կամ
    4.2. տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000-ից մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով՝ ներգրավված բոլոր ֆիզիկական անձանց, ներառյալ՝ ֆուտբոլիստների համար, և/կամ
    4.3. որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք՝ մինչև 1 տարի ժամկետով:

5. Այն անձինք, ովքեր կատարել են սույն հոդվածի 3 և 4-րդ կետերով նախատեսված արարքները, սակայն կամավոր հայտնել են այդ մասին ՀՖՖ-ին և ակտիվ համագործակցել են ՀՖՖ համապատասխան ստորաբաժանումների հետ մեղավոր անձանց հայտնաբերման հարցում, կարող են ազատվել սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունից:

### Հոդված 12. Ռասիզմ և այլ խտրականության դրսևորում

1. Յուրաքանչյուր անձ, ով իր արհամարհական, խտրական կամ նսեմացնող խոսքերով կամ գործողություններով վիրավորում է երկրի, անձի կամ մի խումբ անձանց արժանապատվությունն ու անձեռնմխելիությունը՝ հիմնվելով մաշկի գույնի, ռասայի, էթնիկ պատկանելիության, ազգության, սոցիալական ծագման, սեռի, հաշմանդամության, սեռական կողմնորոշման, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, հարստության, ծննդյան կամ որևէ այլ կարգավիճակի կամ պատճառի վրա, ենթարկվում է կարգապահական պատասխանատվության՝ որակազրկվելով առնվազն 10 խաղով կամ որոշակի ժամանակահատվածով կամ որևէ այլ համապատասխան պատասխանատվության միջոցի կիրառմամբ՝ համաձայն Կանոնակարգի դրույթների:

2. Ակումբները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ու ողջամիտ միջոցները՝ արգելելու մարզադաշտ մուտքը բոլոր այն անձանց, որոնց նկատմամբ մեղադրանք է առաջադրվել կամ որոնք մեղավոր են ճանաչվել խաղացողի, խաղի պաշտոնյայի, մարզչի, թիմի այլ պաշտոնյայի կամ խաղի ընթացքում պաշտոնական դիրք ունեցող որևէ այլ անձի հանդեպ ռասայական խտրական կամ վիրավորական վերաբերմունք դրսևորելու համար՝ հիմնվելով ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության կամ էթնիկ պատկանելության վրա, այդ թվում՝ սոցիալական մեդիայի, թվային հարթակների կամ գրավոր հաղորդագրությունների միջոցով:

3. Խաղի ընթացքում ռասայական խտրական արարք արձանագրվելու դեպքում, մրցավարը կիրառում է ՖԻՖԱ-ի եռաստիճան հակախտրական ընթացակարգը՝ համապատասխան կանոնակարգերի և շրջաբերականների համաձայն: Ընթացակարգը թույլ է տալիս մրցավարին՝

   1) դադարեցնել խաղը,

   2) կասեցնել հանդիպումը,

   3) չշարունակել հանդիպումը:

4. Ցանկացած ֆուտբոլիստ, թիմի անձնակազմի անդամ կամ պաշտոնատար անձ, ով խաղի ընթացքում հանդիսատեսի կողմից ենթարկվում է ռասայական բնույթի վիրավորանքների, կարող է այդ մասին տեղեկացնել մրցավարին՝ օգտագործելով ՖԻՖԱ-ի համապատասխան կանոնակարգով սահմանված ժեստը կամ ցանկացած այլ միջոց: Այնուհետև մրցավարը կարող է անհապաղ կիրառել ՖԻՖԱ-ի եռաստիճան հակախտրական ընթացակարգի առաջին քայլը, ինչպես նշված է վերոնշյալ 3-րդ կետում: Հյուրընկալող ակումբը կամ կազմակերպիչ մարմինը պարտավոր է անհապաղ տեղակայել համապատասխան անձնակազմ մարզադաշտի տվյալ հատվածում՝ ռասայական բնույթի վիրավորանքները դադարեցնելու նպատակով: Ֆուտբոլիստը, թիմի անձնակազմի անդամը կամ պաշտոնյան կարող է նաև ճանաչել խտրական վարքագիծ դրսևորած անձին (կամ անձանց) և պահանջել, որպեսզի վերջինս (կամ վերջիններս) հնարավորության դեպքում հեռացվի (կամ հեռացվեն) մարզադաշտից: Եթե անվտանգության նորմերից ելնելով հնարավոր չէ տվյալ անձանց հեռացնել մարզադաշտից, և խտրական վիրավորանքները շարունակվում են, մրցավարը կարող է կիրառել ՖԻՖԱ-ի եռաստիճան հակախտրական ընթացակարգի երկրորդ քայլը՝ մինչև նշված վարքագիծը դադարի:

5. Այն դեպքերում, երբ խտրական բնույթի վիրավորանքն անձամբ հաստատվել է մրցավարի կողմից և կիրառվել է ՖԻՖԱ-ի եռաստիճան հակախտրական ընթացակարգի երկրորդ քայլը (այսինքն՝ կասեցվել է հանդիպումը)՝ համաձայն վերոնշյալ 3-րդ կետի, վիրավորանքի ենթարկված ֆուտբոլիստը, թիմի անձնակազմի անդամը կամ պաշտոնյան կարող է կարգապահական մարմնին ներկայացնել տուժողի հայտարարություն: Եթե համապատասխան ակումբն ի վիճակի չէ ներկայացնելու բավարար ապացույցներ կամ պարզաբանումներ՝ ֆուտբոլիստի, թիմի անձնակազմի անդամի կամ պաշտոնյայի հայտարարության մեջ նշված խտրական վիրավորանքները հերքելու համար, այդ հայտարարությունը կհամարվի հավաստի: Նման դեպքերում՝ համապատասխան բոլոր հանգամանքները վերլուծելուց և գնահատելուց հետո, Կարգապահական մարմինը կարող է որոշում կայացնել մեղավոր ակումբի թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

6. Եթե ներկայացուցչական թիմի կամ ակումբի մեկ կամ մի քանի երկրպագուներ ներգրավվեն սույն հոդվածի 1-ին կետում նկարագրված վարքագծի մեջ, պատասխանատու ակումբը ենթակա կլինի հետևյալ կարգապահական

պատասխանատվության միջոցներին, նույնիսկ եթե համապատասխան ակումբը կարողանա ապացուցել մեղքի կամ անփութություն բացակայությունը․

ա) Առաջին խախտման դեպքում մեղավոր ակումբի նկատմամբ նշանակվում է հանդիպման անցկացում՝ սահմանափակ թվով երկրպագուների ներկայությամբ և առաջանում է տուգանք՝ առնվազն նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի՝ 2,000,000 ՀՀ դրամի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հանգեցնի ակումբի վրա անհիմն ֆինանսական ծանրաբեռնվածության, որի դեպքում տուգանքը բացառիկ հանգամանքներում կարող է նվազեցվել, սակայն ոչ պակաս քան նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով։ Ռասայական վիրավորանքի դեպքերում՝ խաղացողի, մրցավարի, մարզչի, թիմի այլ պաշտոնյայի կամ հանդիպման ընթացքում պաշտոնական դեր ունեցող որևէ այլ անձի հանդեպ նշանակվող առավելագույն տուգանքը կկազմի նվազագույն աշխատավարձի ութհազարա-պատիկի՝ 8,000,000 ՀՀ դրամի չափով։

բ) Կարգապահական մարմինները կարող են ակումբի նկատմամբ կիրառել հետևյալ հավելյալ կարգապահական պատասխանատվության միջոցները՝ հաշվի առնելով խախտումների պարբերականությունը, կրկնվող բնույթը, ինչպես նաև տվյալ գործի հանգամանքները և անհրաժեշտությունը․ կանխարգելման ծրագրի իրականացում և/կամ առանց երկրպագուների հանդիպման անցկացում և/կամ մարզադաշտի որակազրկում, և/կամ տուգանք, և/կամ վաստակած միավորների նվազեցում, և/կամ մրցաշրջանի բաց թողում, հաջորդ մրցաշրջանում միայն ավելի ցածր խմբում հանդես գալու հնարավորություն, տեխնիկական պարտության գրանցում՝ 0:3 հաշվով։

7. Իրավասու կարգապահական մարմինը կարող է սահմանել վերոնշյալ նվազագույն պատժատեսակներից տարբերվող պատասխանատվության միջոց հետևյալ դեպքերում․

ա) եթե մեղավոր ֆուտբոլիստը կամ թիմի անձնակազմի անդամը կամ պաշտոնատար անձը հետագայում ընդունել է խախտման կատարումը։ Տվյալ դեպքում իրավասու կարգապահական մարմինն իր հայեցողությամբ կարող է պատասխանատվության միջոցի մինչև կեսը փոխարինել ՀՖՖ հաստատմանը ենթակա կրթական, հաղորդակցական և վերապատրաստման միջոցառումներով,

բ) եթե մեղավոր ակումբը պարտավորվում է ՀՖՖ-ի հետ համատեղ մշակել համապարփակ ծրագիր՝ խտրականության դեմ պայքարի և կրկնվող դեպքերի կանխարգելման նպատակով։ Ծրագիրը պետք է հաստատվի ՀՖՖ կողմից և ընդգրկի առնվազն հետևյալ երեք առաջնային ուղղությունները՝

1) Կրթական գործունեություն (ներառյալ՝ հաղորդակցման արշավ, որը միտված է երկրպագուներին և հանրությանը)։ Արշավի արդյունավետությունը պարբերաբար կվերանայվի։

2) Մարզադաշտի անվտանգության ապահովման և երկրպագուների հետ համագործակցության միջոցառումներ (ներառյալ՝ խախտում կատարած անձանց նույնականացման և ֆուտբոլային պատժամիջոցների կիրառման քաղաքականություն, պետական իրավասու մարմիններին փոխանցելու կարգ, ինչպես նաև երկխոսություն երկրպագուների և ազդեցիկ կողմերի հետ՝ դրական փոփոխություններ արձանագրելու նպատակով)։

3) Գործընկերային հարաբերություններ (ներառյալ՝ համագործակցություն երկրպագուների, հասարակական կազմակերպությունների, ոլորտի փորձագետների և շահառուների հետ՝ գործողությունների ծրագրի մշակման, աջակցման և դրա արդյունավետ ու շարունակական իրականացման ապահովման համար)։

8. Կանոնակարգին ենթարկվող անձինք, ովքեր ենթարկվել են հնարավոր խտրական վարքագծի, կարող են համապատասխան կարգապահական մարմնի կողմից հրավիրվել ներկայացնելու բանավոր կամ գրավոր հայտարարություն՝ որպես տուժող կողմ։ Վերջիններս նաև իրավունք ունեն պահանջելու հիմնավորված որոշում կարգապահական վարույթներում։ Նշված անձինք նաև իրավասու են մասնակցել համապատասխան կարգապահական վարույթին որպես կողմ և, սույն Կանոնակարգի համապատասխան դրույթների հիման վրա ներկայացնել բողոք։

9. Բացառիկ հանգամանքների բացակայության դեպքում, խտրական վարքագծի և/կամ ռասայական բնույթի վիրավորանքների հետևանքով խաղը մրցավարի կողմից չշարունակելու դեպքում, մեղավոր ակումբի թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով։

## Հոդված 13. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը

1. ՀՖՖ կողմից կազմակերպված ֆուտբոլի մրցումներին մասնակցող ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը, ակումբի պաշտոնյաները խախտում կատարելու դեպքում ենթարկվում են Կանոնակարգով նախատեսված կարգապահական պատասխանատվության միջոցների:
2. Մրցումների ընթացքում ֆուտբոլիստի այլ ակումբ/թիմ տեղափոխվելու դեպքում, անկախ նրա տարիքից և կարգավիճակից, տվյալ մրցաշրջանի բոլոր խախտումները պահպանվում են և հաշվի են առնվում հետագա պատասխանատվության միջոցները որոշելու ժամանակ:
3. Զգուշացումների արդյունքում որակազրկվելու դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը: Ընդ որում, եթե ֆուտբոլիստը դեղին քարտերի մեծամասնությունը ստացել է ՀՊԼ-ում, ապա վերջինս չի կարող մասնակցել ԱԽ-ի առաջնության խաղերին և հակառակը՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալն այն առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել Ֆուտզալի առաջնության խաղերին: Զգուշացումների հավասարության դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն առաջնությունում, որտեղ ստացել է վերջին զգուշացումը: Ակումբի տուգանքը ևս նշանակվում է ըստ այն առաջնության, որտեղ ֆուտբոլիստը ստացել է զգուշացումների մեծամասնությունը: Զգուշացումների հավասարության դեպքում ակումբի տուգանքը նշանակվում է ըստ այն առաջնության, որտեղ ստացվել է վերջին զգուշացումը:
4. ՀԳԽ խաղերին ստացված զգուշացումների հաշվարկը կատարվում է առանձին: Միևնույն ժամանակ, ՀԳԽ միայն 1/4 եզրափակիչ փուլում ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների տվյալ առաջնությունում մինչև այդ պահը ստացած դեղին քարտերը զրոյացվում են՝ շարունակելով հաշվառումն այդ փուլից սկսած:
5. Զգուշացումների արդյունքում որակազրկվելու դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը: Ընդ որում, եթե ֆուտբոլիստը դեղին քարտերի մեծամասնությունը ստացել է որևէ տարիքային խմբի առաջնությունում, ապա վերջինս չի կարող մասնակցել մեկ ուրիշ տարիքային խմբի առաջնության խաղերին և հակառակը՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալն այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել պրոֆեսիոնալ ֆուտբոլի առաջնությունների և ֆուտզալի առաջնությունների խաղերին: Զգուշացումների հավասարության դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է վերջին զգուշացումը: Ակումբի տուգանքը ևս նշանակվում է ըստ այն տարիքային խմբի առաջնության, որտեղ ֆուտբոլիստը ստացել է զգուշացումների մեծամասնությունը: Զգուշացումների հավասարության դեպքում ակումբի տուգանքը նշանակվում է ըստ այն տարիքային խմբի առաջնության, որտեղ ստացվել է վերջին զգուշացումը:
6. ՀՖՖ մանկապատանեկան զավաթի խաղարկությունների խաղերին ստացված զգուշացումների հաշվարկը կատարվում է առանձին:
7. Ֆուտզալի առաջնությունների խաղերին ստացված զգուշացումների արդյունքում որակազրկվելու դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ միայն ֆուտզալի առաջնություններում՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել ֆուտբոլի սիրողական և պրոֆեսիոնալ առաջնությունների խաղերին:
8. Կանանց ֆուտբոլի առաջնությունների խաղերին ստացված զգուշացումների հաշվարկը կատարվում է առաջնության հաշվարկից առանձին:
9. Հեռացման արդյունքում որակազրկված ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն առաջնությունում, որտեղ նա հեռացվել է խաղադաշտից: Ընդ որում, եթե ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից ՀՊԼ-ում, ապա վերջինս չի կարող մասնակցել ԱԽ-ի առաջնության խաղերին և հակառակը՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալն այն առաջնությունում, որտեղ վերջինս հեռացվել է խաղադաշտից՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել Ֆուտզալի առաջնության խաղերին: Ակումբի տուգանքը ևս նշանակվում է ըստ այն առաջնության, որտեղ ֆուտբոլիստը հեռացվել է մարզադաշտից:
10. ՀԳԽ խաղերին հեռացման արդյունքում որակազրկման հաշվարկը կատարվում է առանձին՝ բացառությամբ սույն հոդվածի 21-րդ կետում նշված դեպքերի:

11. ՀՖՖ մանկապատանեկան առաջնությունների խաղերին հեռացման արդյունքում որակազրկվելու դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ միայն մանկապատանեկան առաջնություններում՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել պրոֆեսիոնալ առաջնությունների խաղերին՝ բացառությամբ սույն հոդվածի 21-րդ կետում նշված դեպքերի:

12. ՀՖՖ մանկապատանեկան գավաթի խաղարկությունների խաղերին հեռացման արդյունքում որակազրկումների հաշվարկը կատարվում է առանձին՝ բացառությամբ սույն հոդվածի 21-րդ կետում նշված դեպքերի:

13. Ֆուտզալի առաջնության խաղերին հեռացման արդյունքում որակազրկվելու դեպքում ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ միայն ֆուտզալի առաջնություններում՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել ֆուտբոլի սիրողական և պրոֆեսիոնալ առաջնությունների խաղերին՝ բացառությամբ սույն հոդվածի 21-րդ կետում նշված դեպքերի:

14. Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող որակազրկված ֆուտբոլիստը չի կարող մասնակցել ՀՊԼ-ի և Առաջին խմբի առաջնության խաղերին՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալը՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել Ֆուտզալի առաջնության խաղերին:

15. Որակազրկված սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստը չի կարող մասնակցել տվյալ առաջնության խաղերին՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալը՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել Ֆուտզալի առաջնության խաղերին:

16. Զգուշացումների արդյունքում որակազրկվելու դեպքում, թիմի անձնակազմի անդամը և/կամ պաշտոնյան բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը: Ընդ որում, եթե դեղին քարտերի մեծամասնությունը ստացվել է որևէ տարիքային խմբի առաջնությունում, ապա վերջինս չի կարող մասնակցել մեկ ուրիշ տարիքային խմբի առաջնության խաղերին և հակառակը՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալն այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է դեղին քարտերի մեծամասնությունը՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել պրոֆեսիոնալ ֆուտբոլի առաջնությունների և ֆուտզալի առաջնությունների խաղերին: Զգուշացումների հավասարության դեպքում թիմի անձնակազմի անդամը և/կամ պաշտոնյան բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն տարիքային խմբի առաջնությունում, որտեղ ստացել է վերջին զգուշացումը: Ակումբի տուգանքը ևս նշանակվում է ըստ այն տարիքային խմբի առաջնության, որտեղ թիմի անձնակազմի անդամը և/կամ պաշտոնյան ստացել է զգուշացումների մեծամասնությունը: Զգուշացումների հավասարության դեպքում ակումբի տուգանքը նշանակվում է ըստ այն տարիքային խմբի առաջնության, որտեղ ստացվել է վերջին զգուշացումը:

17. Հեռացման արդյունքում որակազրկվելու դեպքում թիմի անձնակազմի անդամը և/կամ պաշտոնյան բաց է թողնում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների համապատասխան քանակի խաղ՝ մինչև որակազրկման ժամկետի/խաղերի քանակի լրանալը: Յուրաքանչյուր դեպքում ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կարող է իր որոշմամբ սահմանել որակազրկման՝ կոնկրետ առաջնությունում կիրառման վերաբերյալ:

18. Ֆուտբոլիստի, թիմի անձնակազմի անդամի և/կամ պաշտոնյայի հեռացման դեպքում Ակումբի տուգանքը նշանակվում է ըստ այն առաջնության, որտեղ նա հեռացվել է խաղադաշտից:

19. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի կանոնակարգի Թիվ 1 հավելվածի Բ, Զ, Լ, կետերի 1-ից 13-րդ և Ը, Ժ, Ծ, կետերի 1-ից 9-րդ ենթակետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբն՝ առանց Կարգապահական մարմինների որոշման:

20. Ֆուտբոլային սուբյեկտների՝ խաղի ժամանակահատվածում կամ այլ հանգամանքների դեպքում կարմիր քարտ ստանալու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով բաց են թողնում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարերում իրենց հաջորդ հանդիպում/ները, մինչև ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կկայացնի որոշում բաց թողնվելիք խաղերի վերջնական քանակի և/կամ ժամանակահատվածի վերաբերյալ:

21. Բռնարարքի, ոչ սպորտային վարքագիծ, վարքագծի և էթիկայի կանոնների խախտման, կանոնների շատ կոպիտ խախտման, ծեծկռտուքի մասնակցության կամ հայհոյանքի դեպքում որակազրկված ֆուտբոլիստները և/կամ թիմի անձնակազմի անդամները և/կամ պաշտոնյաները Կարգապահական մարմինների որոշմամբ կարող են զրկվել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցումներին մասնակցության իրավունքից:

22. Չկայացած, անավարտ մնացած կամ հետաձգված հանդիպման դեպքում որակազրկումը չի մարվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հանդիպման չկայանալը կամ անավարտ մնալը պայմանավորված չէ որակազրկված ֆուտբոլային սուբյեկտի թիմի մեղքով:

23. Որակազրկումը համարվում է մարված, եթե բաց թողնված խաղին գրանցվում է տեխնիկական պարտություն սեփական թիմի համար, որի կազմում որևէ որակազրկված, չհայտավորված կամ խաղի արձանագրության մեջ չնշված ֆուտբոլիստ կամ թիմի անձնակազմի անդամ մասնակցել է հանդիպմանը:

24. Որակազրկված ֆուտբոլիստի, թիմի անձնակազմի անդամի որակազրկումը չի մարվում այն դեպքում, երբ տվյալ ֆուտբոլիստը կամ թիմի անձնակազմի անդամը լինելով որակազրկված մասնակցում է խաղին, որի արդյունքում սեփական թիմին գրնացվում է տեխնիկական պարտություն:

25. Սույն հոդվածի պահանջներն ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է տվյալ ակումբի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի՝ տեխնիկական պարտություն:

### Հոդված 14. Որակազրկված ֆուտբոլային սուբյեկտների իրավունքներն ու սահմանափակումները

1. Հեռացման արդյունքում որակազրկված ֆուտբոլիստը

ա) պարտավոր է մնալ թիմի հանդերձարանում կամ դոպինգ ստուգման պայմաններին համապատասխանող սենյակում մինչև դոպինգ թեստի ենթարկվող ֆուտբոլիստների անունների հրապարակումը: Ֆուտբոլիստին կարող է թույլատրվել տեղ զբաղեցնել տրիբունայում՝ միայն այն դեպքում, եթե ապահովված է վերջինիս անվտանգությունը, վերջինս չի ընդգրկվել դոպինգ ստուգման ենթակա անձանց ցանկում և այլևս չի կրում ֆուտբոլային մարզահագուստ:

բ) չի կարող մասնակցել հանդիպումից հետո անցկացվող մամուլի ասուլիսին կամ մարզադաշտում կազմակերպվող որևէ այլ մեդիա միջոցառման:

2. Որակազրկված ֆուտբոլիստին՝

ա) թույլատրվում է գտնվել տրիբունայում, սակայն ոչ անմիջապես խաղադաշտի հարևանությամբ, եթե ապահովված են վերջինիս անձնական անվտանգությունն ու անձեռնմխելիությունը:

բ) արգելվում է մուտք գործել հանդերձարան, թունել կամ տեխնիկական գոտի՝ ոչ խաղից առաջ, ոչ խաղի ընթացքում, ինչպես նաև արգելվում է մասնակցել թիմի մարզմանը կամ նստի պահեստայինների նստարանին: Հանդիպման ավարտից հետո որակազրկված ֆուտբոլիստը կարող է միանալ իր թիմին հանդերձարանում:

գ) արգելվում է մասնակցել խաղից հետո կայանալիք մամուլի ասուլիսին կամ մարզադաշտում անցկացվող որևէ այլ լրատվական միջոցառման:

3. Որակազրկված թիմի անձնակազմի անդամին՝

ա) թույլատրվում է գտնվել տրիբունայում, սակայն ոչ անմիջապես խաղադաշտի հարևանությամբ, եթե ապահովված են վերջինիս անձնական անվտանգությունն ու անձեռնմխելիությունը:

բ) արգելվում է մուտք գործել հանդերձարան, թունել կամ տեխնիկական գոտի: Հանդիպման ավարտից հետո որակազրկված թիմի անձնակազմի անդամը կարող է միանալ իր թիմին հանդերձարանում:

գ) արգելվում է մասնակցել խաղից հետո կայանալիք մամուլի ասուլիսին կամ մարզադաշտում անցկացվող որևէ այլ լրատվական միջոցառման:

4. Բոլոր ակումբները պատասխանատվություն են կրում իրենց ֆուտբոլային սուբյեկտների կողմից սույն հոդվածում նշված կետերի պահպանման համար:

### Հոդված 15. Խաղի ժամանակահատվածում կարգուկանոնը և անվտանգությունը

1. Դաշտի տեր ակումբները պատասխանատու են մարզադաշտի ներսում և շրջակայքում անվտանգության և կարգուկանոնի համար խաղից առաջ, ընթացքում և հետո: Նրանք պատասխանատվություն են կրում ցանկացած

տեսակի միջադեպերի համար և կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության միջոցների և հրահանգների:

2. Այնուամենայնիվ, բոլոր ակումբները պատասխանատվություն են կրում իրենց երկրպագուների կողմից հետևյալ ոչ պատշաճ վարքագծի համար և կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության միջոցների և հրահանգների, նույնիսկ եթե նրանք կարողանան ապացուցել խաղի կազմակերպման հետ կապված որևէ անփութության բացակայությունը.

    2.1. խաղադաշտ ներխուժում իրականացնելը,
    2.2. իրերի նետումը,
    2.3. հրավառ նյութերի կիրառումը,
    2.4. լազերային ցուցիչների կամ նմանատիպ էլեկտրոնային սարքերի օգտագործումը,
    2.5. սպորտային միջոցառմանը ոչ հարիր սադրիչ հաղորդագրություն փոխանցելու համար ժեստերի, բառերի, առարկաների կամ որևէ այլ միջոցի օգտագործումը, մասնավորապես սադրիչ հաղորդագրություններ, որոնք կրում են քաղաքական, գաղափարական, կրոնական, խտրական կամ վիրավորական բնույթ,
    2.6. վնասակար գործողությունները՝ պատճառված մարզադաշտին կամ վերջինիս տեղակայանքներին,
    2.7. ազգային օրհներգի ժամանակ անկարգությունները,
    2.8. հասարակական կարգի ցանկացած այլ տեսակի խախտում (օրինակ՝ կարգուկանոնի կամ կարգապահության բացակայություն), որը նկատվել է մարզադաշտի ներսում կամ շրջակայքում խաղից առաջ, ընթացքում կամ հետո:

## ԳԼՈՒԽ 4. ԷԹԻԿԱ ԵՎ ԱՐԴԱՐ ԽԱՂ

### Հոդված 16. Էթիկայի սկզբունքները, շրջանակը և ընդհանուր առանձնահատկությունները

1. Էթիկայի սկզբունքները վերաբերում են բոլոր Ֆուտբոլային սուբյեկտներին, իսկ Կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ոչ ֆուտբոլային սուբյեկտներին:
2. Այս սկզբունքներով պարտավորված անձինք պետք է գիտակցեն իրենց առջև դրված պարտավորությունների կարևորությունը և պատասխանատվությունը: Նրանք պետք է հետևեն ազնվության, օրինապահության և սպորտային համերաշխության սկզբունքներին և ազնվորեն կատարեն իրենց պարտականությունները:
3. Այս դրույթներով պարտավորված բոլոր անձինք պետք է փոխհամաձայնեցված գործեն ՀՖՖ հետ:
4. Այս դրույթներին ենթարկվող անձինք պարտավորվում են ՀՖՖ-ին անհապաղ տեղեկացնել ոչ էթիկական վարքագծի ցանկացած դրսևորման մասին:

### Հոդված 17. Նվերների փոխանակման կարգը

1. Նվերների փոխանակում իրականացնող անձինք կարող են տալ և/կամ ընդունել խորհրդանշական նվերներ: Վերջիններս պետք է հետևեն, որ այդ ամենը չհանգեցնի շահերի բախման: Յուրաքանչյուր դեպքում նվերի արժեքը չպետք է գերազանցի 100,000 ՀՀ դրամը:

### Հոդված 18. Կաշառակերություն և կոռուպցիա

1. Արգելվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այդ թվում նաև միջնորդի միջոցով) առաջարկել, խոստանալ, տալ կամ ընդունել դրամ, գույք, գույքային իրավունք, արժեթուղթ կամ ցանկացած տեսակի կոռուպցիոն ռիսկեր պարունակող միջոցներ, որոնք կարող են ազդել հանդիպման արդյունքի վրա և առաջացնել շահերի բախում: Նման գործողություններն արգելված են, անկախ դրանց իրականացման բնույթից:

## ԳԼՈՒԽ 5. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Հոդված 19. Կարգապահական խախտման հասկացությունը և ամբողջականությունը

1. Կարգապահական խախտում է համարվում Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կատարված այն գործողությունը կամ անգործությունը, որը հակասում է «արդար խաղի» գաղափարներին և սկզբունքներին, ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կանոնադրությունների և կանոնակարգերի դրույթներին:
2. Եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա անձը ենթարկվում է պատասխանատվության՝ անկախ այն բանից, խախտումը կատարվել է դիտավորությամբ, թե անզգուշության արդյունքում: Կարգապահական խախտումներ կատարելու դեպքում, ֆուտբոլային սուբյեկտը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության կատարած յուրաքանչյուր խախտման համար՝ Կանոնակարգի չափանիշներով:

### Հոդված 20. Կարգապահական պատասխանատվություն

1. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ խաղի պատվիրակի, տեսուչի, մրցավարի, մրցավարի օգնականի, չորրորդ պաշտոնյայի արձանագրությունները կամ զեկույցները, ՀՖՖ գլխավոր քարտուղարության միջնորդությունը, Ֆուտբոլային սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բողոքները:
2. Կարգապահական պատասխանատվության ենթակա են այն Ֆուտբոլային սուբյեկտները, որոնք դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարել են Կանոնակարգով նախատեսված խախտումները:
3. Ակումբը, որը կապված է ՀՖՖ կանոնադրությամբ կամ կանոնակարգերով սահմանված վարքագծի կանոնով, կարող է ենթարկվել կարգապահական միջոցների և հրահանգների, եթե այդպիսի կանոնը խախտվի ակումբի անունից որևէ գործառույթ իրականացնող իր անդամներից մեկի, ֆուտբոլիստների, պաշտոնյաների կամ երկրպագուների կամ որևէ այլ վարքագծի արդյունքում, նույնիսկ եթե համապատասխան ակումբը կարող է ապացուցել որևէ մեղքի կամ անփութության բացակայությունը:
4. Եթե կարգապահական մարմինը հանգում է այն եզրակացության, որ կարգապահական խախտում թույլ տված ֆուտբոլային սուբյեկտի կողմից տրամադրված տեղեկատվությունը համոզիչ է և բավարար, կամ առկա են պատասխանատվությունը մեղմացնող այլ հանգամանքներ, ապա կարգապահական մարմինը կարող է իր հայեցողությամբ նվազեցնել կարգապահական պատասխանատվության միջոցները կամ նույնիսկ չկիրառել դրանք:
5. Կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառվում են Կարգապահական մարմինների որոշմամբ և համապատասխան ժամկետներում պարտադիր են կատարման բոլոր Ֆուտբոլային սուբյեկտների համար:

### Հոդված 21. Կարգապահական պատասխանատվության սկզբունքները

1. Ֆուտբոլի բնագավառում ներգրավված բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք պետք է հարգեն գործող ԻՖԱԲ խաղի կանոնները, ինչպես նաև ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կիրառելի և վերաբերելի կանոնակարգերը, հրահանգները, որոշումները և շրջաբերականները և պահպանեն էթիկայի վարքագծի, միասնության, հավատարմության, ամբողջականության, մրցակցին հարգելու և սպորտային վարքագծի սկզբունքները:
2. Կարգապահական պատասխանատվության են ենթակա այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք ենթադրյալ կարգապահական խախտում պահին համարվել են Ֆուտբոլային սուբյեկտներ, ընդ որում վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած հանգամանք(ներ)ից հետո իրավաբանական և/կամ ֆիզիկական անձի Ֆուտբոլային սուբյեկտ լինելը դադարելը հիմք չէ կարգապահական վարույթը դադարեցնելու և/կամ կարճելու համար:
3. Խախտման դեպքի առնչությամբ քաղաքացիական, վարչական, քրեական և/կամ այլ վարույթի ընթացքը և դրա համապատասխան ակտերը չեն կարող խոչընդոտ հանդիսանալ Կարգապահական մարմինների կողմից խախտման փաստը հաստատված համարելու և պատասխանատվության ենթարկելու համար:

### Հոդված 22. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն պատասխանատվության է ենթարկում կատարված կարգապահական խախտման համար՝ նշանակելով պատասխանատվության համապատասխան միջոց՝ համաձայն Կանոնակարգի պատասխանատվության միջոցների ցանկի:
2. Եթե որևէ խախտման համար պատասխանատվության միջոց սահմանված չէ Կանոնակարգով, ապա կարգապահական մարմինները, կարող են իրավասու մարմինների գործող սկզբունքների հիման վրա խախտման տվյալ տեսակը գնահատել որպես կարգապահական խախտում և նշանակել համարժեք պատասխանատվության միջոց(ներ):
3. Կարգապահական մարմինների կողմից կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները կարող են համակցվել:
4. Կանոնակարգի Թիվ 1 հավելվածով սահմանվում է ստանդարտ կարգապահական միջոցների ցանկը, որոնք կարող են կիրառվել համապատասխան կարգապահական մարմնի կողմից որոշում կայացնելիս: Ընդ որում Թիվ 1 հավելվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են նվազեցվել՝ հաշվի առնելով ֆուտբոլային սուբյեկտների կողմից տրամադրված տեղեկատվությունը, խախտման հանգամանքները, զղջումը և պատասխանատվությունը մեղմացնող այլ հանգամանքների առկայությունը:
5. Ամեն դեպքում Կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառելիս հաշվի է առնվում թույլ տրված խախտման բնույթը, պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներն ամբողջության մեջ:

### Հոդված 23. Պատասխանատվության միջոցները՝ մի քանի խախտում կատարելու դեպքում

1. Ֆուտբոլային սուբյեկտների կողմից միևնույն խաղի ժամանակահատվածում մի քանի խախտումներ կատարելու դեպքում, յուրաքանչյուր խախտման համար նշանակվում է առանձին պատասխանատվության միջոց, որը կարող է լրիվ կամ մասնակի գումարվել, և/կամ ավելի մեղմ պատասխանատվության միջոցը ներառվել ավելի խիստ պատասխանատվության միջոցում:
2. Մեկ խաղում ֆուտբոլիստի ստացած 2 զգուշացումը (դեղին քարտը) դիտվում է որպես հեռացում, և ոչ թե 2 զգուշացում:

### Հոդված 24. Պատասխանատվության միջոցների պայմանական կիրառում

1. Եթե պատասխանատվության միջոց նշանակելիս կարգապահական մարմինը, ելնելով գործի հանգամանքներից, գալիս է այն եզրակացության, որ այն կարող է կիրառվել առանց իրական կատարման, նա որոշում է պատասխանատվության միջոցն ամբողջությամբ կամ մասնակի նշանակել պայմանական:
2. Պատասխանատվության միջոցը պայմանական նշանակելիս իրավասու մարմինը կարգապահական խախտում թույլ տված անձի նկատմամբ նշանակում է փորձաշրջան՝ 1 (մեկ) ամսից մինչև 1 (մեկ) տարի ժամկետով, որի ընթացքում տվյալ անձը պետք է ապացուցի իր ուղղումն իր վարքագծով:
3. Պատասխանատվության բոլոր միջոցները կարող են կիրառվել պայմանական, բացառությամբ՝
   - 3.1. նախազգուշացում,
   - 3.2. նկատողության,
   - 3.3. ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք,
   - 3.4. անցանկալի անձ (Persona non grata) հայտարարվել,
   - 3.5. պայմանավորված խաղերի, խարդախության, կաշառակերության կամ կոռուպցիայի հետ կապված պատասխանատվության միջոցներ,
   - 3.6. տեխնիկական պարտություն:
4. Եթե Ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգաահական միջոցը գումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին:

### Հոդված 25. Պատասխանատվության միջոցի գործողությունը ժամանակի մեջ

1. Կանոնակարգով սահմանված պատասխանատվության միջոցների ժամկետները հաշվարկվում (սահմանվում) են խաղերի քանակով, օրերով, ամիսներով կամ տարիներով:
2. Որակազրկման ժամկետն առաջնության ավարտին չլրանալու դեպքում ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի  նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցի չկրած մասը տեղափոխվում է հաջորդ մրցաշրջան և տարածվում է այն մրցումների վրա, որտեղ հայտավորվում է տվյալ ֆուտբոլիստը և/կամ թիմի անձնակազմի անդամը, բացառությամբ սույն կանոնակարգի կանոնակարգի Թիվ 1 հավելվածի Բ, Ձ, Լ, կետերի 1-ից 13-րդ և Ը, Ժ, Ծ կետերի 1-ից 9-րդ ենթակետերով կիրառված որակազրկումների, որոնք մարվում են:

### Հոդված 26. Կարգապահական մարմինների հատուկ իրավասությունը

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է կիրառել կարգապահական պատասխանատվության միջոց նույնիսկ այն դեպքում, երբ մրցավարը և/կամ մրցավարի օգնականները, չեն նկատել կարգապահական լուրջ, կոպիտ խախտումը:
2. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն վերանայում է մրցավարի որոշումները և կիրառում է համապատասխան միջոցներ միայն հետևյալ դեպքերում՝

   2.1. Ֆուտբոլիստին կամ թիմի անձնակազմի անդամին սխալմամբ դեղին քարտ է ցույց տրվել մեկ այլ ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի փոխարեն
   2.2. Ֆուտբոլիստը կամ թիմի անձնակազմի անդամը սխալմամբ հեռացվել է մեկ այլ ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի փոխարեն
   2.3. Ֆուտբոլիստը կամ թիմի անձնակազմի անդամը չի հեռացվել երկրորդ դեղին քարտ ստանալուց հետո:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերի վերաբերյալ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կարող է որոշում կայացնել բացառապես ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից տրված հիմնավոր եզրակացության հիման վրա:
4. ՀՖՖ Մրցավարական և տեսչական կոմիտեն պարտավոր է վիճարկումը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեին տրամադրել համապատասխան եզրակացությունը:
5. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն խաղի ժամանակ մրցավարի կողմից կայացրած որոշումներից բացի, կարող է կիրառել լրացուցիչ պատասխանատվության միջոցներ՝ համաձայն Կանոնակարգի:
6. Եթե ենթադրյալ  խախտումն առաջանում է ՀՖՖ-ին առնչվող հարցերից, ապա ՀՖՖ կարգապահական մարմիններն ունեն նմանատիպ դեպքերը կարգավորելու հատուկ իրավասություն:
7. Խաղադաշտում մրցավարի կողմից կայացված բոլոր որոշումները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, այդ թվում՝ Մրցավարի վիդեո օգնականի և/կամ դարպասագծի տեխնոլոգիայի կիրառման կամ չկիրառման վերաբերյալ որոշումները, հանդիսանում են վերջնական և ենթակա չեն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից վերանայման կամ բողոքարկման:

### Հոդված 27. Հրահանգներ

1. Կարգապահական մարմինները բացի պատասխանատվության միջոցների կիրառումից կարող են նաև Ֆուտբոլային սուբյեկտներին տալ որոշակի հրահանգներ, որոնք սահմանում են կարգապահական միջոցների կիրառման եղանակը:
2. Հրահանգը պարտավորեցնում է Ֆուտբոլային սուբյեկտներին հետևել որոշակի վարքագծին:
3. Կարգապահական մարմինները կարող են նաև Ակումբների նկատմամբ սահմանել վնասի հատուցման պարտականություն, իր Ֆուտբոլային սուբյեկտների և/կամ երկրպագուների կողմից հասցված վնասների դեպքում:

### Հոդված 28. Վիճարկումը

1. Ակումբներն իրավունք ունեն ներկայացնելու վիճարկումներ ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտե:
2. Խախտման վիճարկումը գրանցելու համար ակումբի լիազորված անձը խաղից հետո առավելագույնը 60 րոպեի ընթացքում պետք է պաշտոնապես դիմի խաղի պատվիրակին և լրացնի խաղի արձանագրության համապատասխան բաժինը՝ ներկայացնելով վիճարկման հիմքերը, այն է՝ որ խախտումն է վիճարկվում և ում կողմից է այն կատարվել:
3. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով վիճարկումը գրանցելուց հետո ակումբը 24 ժամվա ընթացքում ՀՖՖ պաշտոնական էլեկտրոնային փոստին է ներկայացնում տվյալ խախտման վերաբերյալ հիմնական վիճարկումը և սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված վիճարկման տուրքի վճարումը հավաստող ապացույցը:
4. Վիճարկման տուրքը յուրաքանչյուր վիճարկվող խախտման համար կազմում է 100,000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՖՖ հաշվեհամարին՝ անկանխիկ վճարում կատարելու միջոցով:
5. Սույն հոդվածի 2 և/կամ 3-րդ կետերին չհամապատասխանող վիճարկման դիմումը թողնվում է առանց քննության:
6. Վիճարկումը քննարկվում է ՀՖՖ Մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով վիճարկումը և Տուրքի վճարումը կատարված լինելը հավաստող ապացույցը ստանալու պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: Վիճարկման քննության արդյունքում կայացվում է որոշում, որն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է վիճարկումը ներկայացրած և մրցակից ակումբներին:
7. ՀՖՖ մրցավարական և տեսչական կոմիտեի կողմից կայացված որոշումները ենթակա չեն բողոքարկման ՀՖՖ կարգապահական մարմիններ, բացառությամբ 26-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:
8. Վճարված տուրքը վերադարձվում է վիճարկումը ներկայացրած ակումբին միայն այն դեպքում, երբ վիճարկումը բավարարվում է, մնացած բոլոր դեպքերում Տուրքը ենթակա չէ վերադարձման:

## ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

### Հոդված 29. Կարգապահական մարմիններ

1. Կանոնակարգի շրջանակներում կարգապահական մարմիններն են՝

   1.1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն (ԿԷԿ)
   1.2. ՀՖՖ բողոքարկման կոմիտեն (ԲԿ)

2. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի և ՀՖՖ բողոքարկման կոմիտեի անդամները ընտրվում են ՀՖՖ կանոնադրությամբ սահմանված կարգով ՀՖՖ Ժողովի կողմից՝ Գործադիր կոմիտեի առաջարկությամբ 4 տարի ժամկետով:

3. Եթե կարգապահական մարմիններից մեկի նախագահը, փոխնախագահը կամ անդամը վաղաժամկետ դադարեցնում է իր գործունեությունը, ապա Գործադիր կոմիտեն նշանակում է վերջինիս փոխարինող՝ մինչև հաջորդ ՀՖՖ Ժողովը: Հաջորդ ՀՖՖ Ժողովը նշանակում է իրավական մարմնի նոր անդամի՝ մնացյալ ժամկետով պաշտոնավարելու համար:

### Հոդված 30. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտե

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և 5 (հինգ) անդամներից: ԿԷԿ-ն իրավազոր է որոշումներ ընդունել Կոմիտեի անդամներից առնվազն երեք անդամների մասնակցությամբ:
2. Անհրաժեշտության դեպքում ԿԷԿ նախագահը կարող է ավելացնել քվորումի համար անհրաժեշտ անդամների քանակը:
3. ԿԷԿ նախագահն իր լիազորությունների սահմաններում՝

   3.1. իրականացնում է ԿԷԿ աշխատանքի ընդհանուր ղեկավարումը,
   3.2. ստորագրում է ԿԷԿ որոշումները,
   3.3. հրավիրում է ԿԷԿ նիստեր, լսումներ և նախագահում է դրանք,
   3.4. իրականացնում է սույն և այլ կանոնակարգերին համապատասխանող այլ լիազորություններ:

4. ԿԷԿ նախագահը, իսկ նախագահի բացակայության դեպքում վերջինիս որոշմամբ փոխնախագահը կամ կոմիտեի այլ անդամ կարող է միանձնյա որոշումներ կայացնել հետևյալ դեպքերում՝

   4.1. անհետաձգելի,
   4.2. երբ կիրառված պատասխանատվության միջոցը նախազգուշացում, նկատողություն կամ մինչև 250,000 ՀՀ դրամի չափով տուգանք և/կամ մինչև 4 խաղ որակազրկում է: ց

### Հոդված 31. ՀՖՖ Բողոքարկման կոմիտե

1. ՀՖՖ բողոքարկման կոմիտեն բաղկացած է՝ նախագահից, փոխնախագահից և 3 (երեք) անդամներից:

2. ԲԿ-ն իրավազոր է որոշումներ ընդունել կոմիտեի անդամներից առնվազն երեքի մասնակցությամբ:

3. Անհրաժեշտության դեպքում ԲԿ նախագահը կարող է ավելացնել քվորումի համար անհրաժեշտ անդամների քանակը:

4. ԲԿ նախագահը, իսկ նախագահի բացակայության դեպքում վերջինիս որոշմամբ փոխնախագահը կամ կոմիտեի այլ անդամ կարող է միանձնյա որոշում կայացնել հետևյալ դեպքերում.

   4.1. հրատապ հարցերով,
   4.2. եթե ԿԷԿ և ԲԿ կողմից սահմանված տուգանքը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը կամ որակազրկման ժամկետը չի գերազանցում 4 խաղը:

5. ԲԿ-ն իրավասու է լսել այն բոլոր բողոքարկումները, որոնց համար հիմք հանդիսացած որոշումներն ընդունվել են ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից՝ այդ թվում ԿԷԿ նախագահի կողմից միանձնյա ընդունվածները:

### Հոդված 32. Անկախություն

1. Կարգապահական մարմինների անդամներն անկախ են և չեն ենթարկվում ՀՖՖ որևէ այլ մարմնի և առաջնորդվում են բացառապես ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ կանոնադրություններով և կիրառելի ու վերաբերելի այլ կանոնակարգերով:

### Հոդված 33. Կարգապահական մարմինների անդամների ինքնաբացարկը

1. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում Կարգապահական մարմինների անդամները պետք է ինքնաբացարկ հայտնեն և հրաժարվեն վարույթի հետագա քննությանը մասնակցելուց:

2. Անդամի ինքնաբացարկի հիմքերն են՝

   2.1. անձնական շահագրգռվածությունը կոնկրետ վարույթը քննելիս,
   2.2. ուղղակի և (կամ) անուղղակի կախվածությունը կողմերից յուրաքանչյուրից,
   2.3. այլ հանգամանքների առկայությունը, որոնք կարող են հիմնավոր կասկած հարուցել անդամի անկախության կամ անկողմնակալության վերաբերյալ: :

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում վարույթի մասնակիցները նույնպես կարող են բացարկ հայտնել համապատասխան անդամին:

### Հոդված 34. Կարգապահական մարմինների որոշում ընդունելու կարգը

1. Կարգապահական մարմինների որոշումները կայացվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանդիսանում համապատասխան կոմիտեի նախագահի ձայնը:

2. Կարգապահական մարմինների անդամները պետք է պահպանեն գաղտնիության սկզբունքները:

3. Կարգապահական մարմիններն իրենց որոշումները հիմնավորում են՝ ՀՖՖ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ, կանոնադրություններով, կանոնակարգերով, կանոններով, հրահանգներով, շրջաբերականներով, որոշումներով, գործում առկա ապացույցներով, ինչպես նաև գործող ԻՖԱԲ խաղի կանոններով:

4. Կարգապահական մարմինների որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

### Հոդված 35. Կարգապահական գրասենյակը

1. Կարգապահական մարմինների գրասենյակի (Գրասենյակ) գործառույթներն իրականացնում է ՀՖՖ Իրավական մարմինների գրասենյակը:

2. Գրասենյակը պատասխանատու է կազմակերպչական առաջադրանքների, քարտուղարության վարման (հարցումների, ծանուցումների իրականացում, ապացույցների հավաքագրում), նիստերի արձանագրություններ վարելու, կարգապահական վարույթի ընթացքում ցանկացած աջակցություն ցուցաբերելու և կարգապահական մարմինների կողմից կայացվելիք որոշումների նախագծերի պատրաստման համար:

### Հոդված 36. Կարգապահական մարմինների անդամների և գրասենյակի աշխատակազմի պատասխանատվությունը

1. Կարգապահական մարմինների անդամները և Գրասենյակի աշխատակազմը պատասխանատվություն չեն կրում կարգապահական վարույթի հետ կապված գործողությունների կամ անգործության համար, բացառությամբ լուրջ անփութության կամ հակօրինական գործունեության դեպքերի:

## ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 37. Կարգապահական վարույթի լեզուն

1. Վարույթը կարգապահական մարմիններում և՛ գրավոր, և՛ բանավոր, իրականացվում է ՀՖՖ պաշտոնական լեզվով՝ հայերեն:

2. Կարգապահական վարույթի մասնակից ցանկացած անձ, ով ցանկանում է այլ լեզու օգտագործել լսումների ժամանակ, պետք է ողջամիտ ժամկետում հայտնի թարգմանչի ներգրավման մասին: Թարգմանիչները պետք է հաստատվեն ՀՖՖ կողմից: Թարգմանչի ծառայությունների վճարման պարտականությունը դրվում է վերջինիս ներգրաված անձի վրա:

### Հոդված 38. Նիստի հրավիրում, Ֆուտբոլային սուբյեկտների և վարույթի այլ մասնակիցների իրավունքներ ու պարտականություններ, լսումներ, որոշումներ, հաղորդակցություն և գաղտնիություն

1. Կարգապահական մարմինները նիստերը և լսումները հրավիրվում են իրենց համապատասխան նախագահների կողմից:

2. Եթե Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, վարույթի մասնակիցներն իրավունք ունեն մինչև որևէ որոշում կայացնելը ներկայացնել գրավոր դիրքորոշումներ:

3. Անհրաժեշտության դեպքում Կարգապահական մարմինները կարող են ֆուտբոլային և ոչ ֆուտբոլային սուբյեկտներին հրավիրել ներկա գտնվելու լսումներին: Այդ դեպքում հրավերն ուղարկվում է հրավիրվողի և/կամ հրավիրվողի ակումբի փոստային կամ էլեկտրոնային հասցեներին:

4. Առանց հարգելի պատճառների կարգապահական մարմինների լսումներին հրավիրված և չներկայացած ֆուտբոլային սուբյեկտների (ակումբների) նկատմամբ կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոց՝ տուգանք:

5. Լսումները ձայնագրվում և արխիվացվում են: Վարույթի մասնակիցներին ձայնագրությունը կարող է հասանելի դառնալ բացառապես, եթե մասնակիցը պնդում է, որ լսումների ընթացքում խախտվել են իր օգտին կիրառվող ընթացակարգային կանոնները, իրավասու կարգապահական մարմնի նախագահը կամ նրա կողմից առաջադրված անձը կարող է թույլ տալ այդ կողմին լսել և/կամ դիտել ձայնագրությունը ՀՖՖ գրասենյակում: Ձայնագրությունները ոչնչացվում են հինգ տարի անց:

6. Կարգապահական մարմինները կարող են նիստեր անցկացնել և որոշումներ կայացնել վարույթի մասնակիցներից մեկի կամ բոլորի բացակայությամբ:

7. Եթե միևնույն ակումբի կամ անձանց դեմ տարբեր վարույթներ են հարուցվում, իրավասու կարգապահական մարմինը կարող է միավորել գործերը և կայացնել մեկ համապարփակ որոշում:

8. Կարգապահական մարմինների լսումները դռնփակ են:

9. Կարգապահական մարմինները կարող են որոշումներ կայացնել հեռակոնֆերանսի, տեսակոնֆերանսի կամ նման այլ եղանակների միջոցով:

10. Ակումբին կամ անձին վերաբերող բոլոր հաղորդագրությունները (ներառյալ նրանց դեմ վարույթի մասին ծանուցումը և կարգապահական մարմինների կողմից ընդունված որոշումների ընդունումը) հասցեագրվում են համապատասխան ակումբին, որը պետք է տեղեկացնի անձին: ՀՖՖ կամ կարգապահական մարմինների կողմից նման բոլոր հաղորդակցությունները ՀՖՖ կարգապահական գրասենյակի կողմից ուղարկվում են էլեկտրոնային նամակների տեսքով:

11. Կարգապահական վարույթի ընթացքում կազմված նյութերը պետք է պահպանվեն գաղտնի, բացառությամբ կայացված որոշման՝ ՀՖՖ պաշտոնական կայքում հրապարակվող մասի:

12. Իրավասու կարգապահական մարմինը կարող է ցանկացած պահի շտկել տեխնիկական սխալները կամ որոշման մեջ որևէ ակնհայտ սխալ:

## Հոդված 39. Ներկայացուցչություն

13. Ֆուտբոլային սուբյեկտները կարգապահական վարույթի ընթացքում կարող են հանդես գալ ներկայացուցչի միջոցով:
14. Ներկայացուցիչները պետք է ապացուցեն իրենց լիազորությունները՝ լիազորագրի միջոցով:
15. Ներկայացուցչի իրավասության վերաբերյալ որոշում է կայացնում համապատասխան կարգապահական մարմինը:
16. Յուրաքանչյուր դեպքում կարգապահական վարույթը քննող կարգապահական մարմինը կարող է պահանջել համապատասխան ֆուտբոլային սուբյեկտի ներկայությունը հրավիրված լսումներին:

## Հոդված 40. Կարգապահական մարմինների հետ համագործակցելու պարտականությունը

1. Բոլոր ֆուտբոլային սուբյեկտները պարտավոր են համագործակցել կարգապահական մարմինների հետ, այդ թվում՝ իրավասու մարմնի հարցումներով ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր, տեսագրություններ, դիրքորոշումներ, բացատրություններ և այլ պահանջված ու անհրաժեշտ նյութեր:
2. Փաստաթղթերի, նյութերի, տեսագրությունների, բացատրությունների, դիրքորոշումների և այլ տեղեկությունների հարցման դեպքում իրավասու կարգապահական մարմինն իրավունք ունի դրանք տրամադրելու համար սահմանել ողջամիտ ժամկետ:
3. Կարգապահական մարմինների հետ համագործակցությունից խուսափող ֆուտբոլային սուբյեկտի նկատմամբ, այդ թվում՝ հարցման հիման վրա անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը, տեսագրությունները, բացատրությունները, դիրքորոշումները և առկա այլ տեղեկությունները չտրամադրելու դեպքում կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոց՝ տուգանք:
4. Եթե ֆուտբոլային սուբյեկտը հրաժարվում է կարգապահական մարմինների հետ համագործակցությունից, իսկ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու այլ ձևեր չկան, ապա իրավասու կարգապահական մարմինը որոշում է կայացնում գործում առկա նյութերի հիման վրա՝ ներքին համոզմամբ:
5. Կարգապահական մարմինների լսումներին հրավիրված ցանկացած ֆուտբոլային սուբյեկտի նկատմամբ, ում գործողությունները/անգործություն խախտում է քննության բնականոն ընթացքը, իրավասու կարգապահական մարմնի նախագահի կամ վերջինիս փոխարինող անձի կողմից կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոց և/կամ նիստից հեռացում:

## Հոդված 41. Ժամկետները

1. Կարգապահական վարույթի շրջանակներում ժամկետը սկսվում է այն օրվան հաջորդող օրը, երբ Ֆուտբոլային սուբյեկտը ծանուցվել է Կանոնակարգի 38-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված կարգով: Այն համարվում է պահպանված, եթե գործողություն է կատարվում մինչև վերջնաժամկետի կեսգիշերը (երևանյան ժամանակով) 24:00: Ժամկետների հաշվարկի մեջ ներառվում են պաշտոնական տոները և ոչ աշխատանքային օրերը:Ժամկետներըկասեցվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ ոչ աշխատանքային օրերին: Սույն կասեցումը չի կիրառվում ՀՖՖ կանոնադրությամբ սահմանված կարգով Սպորտային արբիտրաժային դատարան բողոք ներկայացնելու ժամկետի նկատմամբ:
2. Եթե ժամկետի վերջին օրը համընկնում է շաբաթ, կիրակի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրվա հետ, ժամկետը լրանում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՖՖ իրավասու կարգապահական մարմինը ժամկետը սահմանելիս իր պաշտոնական հաղորդագրությամբ հստակ նշել է, որ վերջնաժամկետը ենթակա չէ տեղափոխման և պետք է պահպանվի՝ անկախ այն շաբաթ, կիրակի կամ ոչ աշխատանքային օր համընկնելու հանգամանքից:

3. Սահմանված ժամկետը չպահպանելու դեպքում համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը կորցնում է դրանով նախատեսված ընթացակարգային իրավունքը:

4. Սույն Կանոնակարգով սահմանված ժամկետները երկարաձգման ենթակա չեն:

## Հոդված 42. Ապացուցումը կարգապահական վարույթում

1. Իրավասու կարգապահական մարմինն ապացույցների գնահատումն իրականացնում է ինքնուրույն:

2. Կարգապահական մարմինը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

3. Կարգապահական մարմիններն ապացույցների գնահատման վերաբերյալ ունեն բացարձակ հայեցողություն: Կարգապահական վարույթի քննության ժամանակ կիրառվող ապացուցման չափանիշ է համարվում իրավասու կարգապահական մարմնի բավարար գոհունակությունը:

## Հոդված 43. Ապացույցների տեսակները

1. Կարգապահական վարույթի ընթացքում կարող է օգտագործվել ցանկացած տեսակի ապացույց՝ պայմանով, որ չոտնահարվի մարդու արժանապատվությունը:

2. Կարգապահական վարույթի շրջանակներում որպես ապացույց կարող են օգտագործվել պաշտոնական զեկույցներ և արձանագրություններ, հարցումների պատասխաններ, կողմերի և ՀՖՖ պաշտոնյաների բացատրություններ, տեղանքի զննություններ, փորձագետների եզրակացություններ, հեռուստահաղորդումներ և տեսաձայնագրություններ, ցուցմունքներ, այլ փաստաթղթեր և նյութեր (այդ թվում՝ շահումով խաղերում խարդախությունների մասին հաղորդումներ, ՖԻՖԱ և ՈՒԵՖԱ կողմից ներկայացված համապատասխան հաշվետվություններ, զեկույցներ և այլ փաստաթղթեր), որոնք կարող են էական նշանակություն ունենալ գործի լուծման համար:

3. Կարգապահական մարմինները կարող են ցանկացած դեպքում պահանջել լրացուցիչ ապացույցներ:

4. ՀՖՖ, ՖԻՖԱ և ՈւԵՖԱ պաշտոնական զեկույցներում (խաղի արձանագրությունները և այլն) ներառված փաստերը համարվում են հավաստի: Այդուհանդերձ, վարույթի ընթացքում կարող են ներկայացվել այդ փաստերի ոչ հավաստի լինելու մասին ապացույցներ, որոնց ապացուցման պարտականությունը կրում է դրանք ներկայացնող կողմը:

5. Եթե պաշտոնական զեկույցներում կամ արձանագրություններում առկա են միմյանց հակասող տեղեկություններ, և այդ հակասությունը հնարավոր չէ վերացնել այլ ապացույցների միջոցով, կիրառվում է կարգապահական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտի համար առավել բարենպաստ մեկնաբանությունը:

## Հոդված 44. Վկաները

1. ՀՖՖ իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք պարտավոր են ներկայանալ որպես վկա: Յուրաքանչյուր ոք, ով չի կատարում իրավասու կարգապահական մարմնի պահանջը, կարող է ենթարկվել պատասխանատվության միջոցի: Կարգապահական մարմինները որոշում կայացնելիս կարող են պատշաճ կերպով հաշվի առնել լսումներին ներկայանալու և/կամ կողմի ներկայացուցչի կամ վկայի ցանկացած անհիմն մերժումը և/կամ ապացույցներ տրամադրելը:

2. Անչափահասները և այլ խոցելի անձինք, որոնք կանչվել են որպես վկաներ, կարող են լսումներին ուղեկցվել օրինական ներկայացուցչի կողմից:

3. Բոլոր այն անձինք, ովքեր կանչված են կարգապահական մարմինների առջև ցուցմունք տալու համար, պարտավոր են ասել ճշմարտությունը և խղճով պատասխանել իրենց տրվող ցանկացած հարցին:

4. Իրավասու կարգապահական մարմնի նախագահը որոշում է կայացնում կողմերի առաջարկած վկաների հարցաքննության վերաբերյալ: Վարույթի յուրաքանչյուր մասնակից պատասխանատու է իր կողմից կանչված վկաների հասանելիությունն ապահովելու և ծախսերը հոգալու համար:

5. Կարգապահական մարմինները կարող են սահմանափակել կամ մերժել ցանկացած վկայի ցուցմունք կամ դրա որևէ մաս՝ վարույթին ոչ վերաբերելի լինելու հիմքով:

## Հոդված 45. Անանուն վկաները

1. Եթե հարուցված կարգապահական վարույթում անձի ցուցմունքը կարող է վտանգի ենթարկել նրա կյանքը կամ ֆիզիկական վտանգի ենթարկել այդ անձին կամ նրա ընտանիքին կամ մտերիմ ընկերներին, իրավասու կարգապահական մարմնի նախագահը կամ նրա կողմից առաջադրված անձը կարող է պահանջել, որ.

   1.1. վկան չբացահայտվի վարույթի մասնակիցների ներկայությամբ,

   1.2. վկան չներկայանա նիստին,

   1.3. ամբողջ կամ որոշակի տեղեկություն, որը կարող է օգտագործվել վկայի ինքնությունը պարզելու համար պահպանվի առանձին և գաղտնի:

2. Հաշվի առնելով ընդհանուր հանգամանքները (մասնավորապես, եթե անանուն վկայի փաստը հաստատող այլ ապացույց չկա), և եթե դա տեխնիկապես հնարավոր է, իրավասու կարգապահական մարմնի նախագահը կամ նրա կողմից նշանակված անձը կարող է իր սեփական նախաձեռնությամբ կամ վարույթի մասնակիցների միջնորդությամբ որոշել, որ.

   2.1. վկայի ձայնը լինի փոփոխված,

   2.2. վկայի դեմքը լինի դիմակավորված,

   2.3. վկան հարցաքննվի լսումների դահլիճից դուրս,

   2.4. վկան քննվի գրավոր իրավասու կարգապահական մարմնի նախագահի կամ նրա կողմից նշանակված անձի միջոցով:

3. Կարգապահական պատասխանատվության միջոց է կիրառվում յուրաքանչյուրի նկատմամբ, ով բացահայտում է անանուն վկայի ինքնությունը կամ ցանկացած տեղեկություն, որը կարող է օգտագործվել նրա ինքնությունը պարզելու համար:

## Հոդված 46 Անանուն վկաների նույնականացումը

1. Անանուն վկաների անվտանգությունն ապահովելու համար անանուն վկաներին բացահայտում են փակ դռների հետևում՝ վարույթի մասնակիցների բացակայությամբ: Այն իրականացվում է կամ իրավասու կարգապահական մարմնի նախագահի կամ նրա կողմից որոշված անձի կողմից միայնակ, կամ իրավասու կարգապահական մարմնի բոլոր անդամների կողմից միասին և արձանագրվում վկայի անձնական տվյալները պարունակող արձանագրություններում:
2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված արձանագրությունը վարույթի մասնակիցներին չի փոխանցվում:
3. Վարույթի մասնակիցները ստանում են համառոտ գրություն, որը
   3.1. հաստատում է, որ անանուն վկան պաշտոնապես բացահայտվել է և
   3.2. չի պարունակում մանրամասներ, որոնք կարող են օգտագործվել անանուն վկայի ինքնությունը պարզելու համար:

## Հոդված 47. Ժամանակավոր միջոցներ

1. Իրավասու կարգապահական մարմնի նախագահը կամ նրա կողմից նշանակված անձն իրավունք ունի նշանակել ժամանակավոր միջոցներ, եթե դրանք անհրաժեշտ են համարվում վարույթի պատշաճ իրականացումն ապահովելու, սպորտային կարգապահությունը պահպանելու կամ անուղղելի վնասից խուսափելու կամ ապահովության և անվտանգության նկատառումներից ելնելով: Նման որոշումը կարող է կայացվել առանց վարույթի մասնակիցներին և/կամ պատասխանատվության ենթարկվող անձին լսելու:

2. Ժամանակավոր միջոց կարող է կիրառվել մինչև 90 օր ժամկետով: Նման ցանկացած միջոցի տևողությունը կարող է նվազեցվել վերջնական կարգապահական տույժից: Իրավասու կարգապահական մարմնի նախագահը կամ նրա կողմից նշանակված անձը կարող է երկարաձգել ժամանակավոր միջոցի գործողության ժամկետը մինչև 30 օր:

3. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի կամ նրա կողմից որոշված անձի կողմից նշանակված ժամանակավոր միջոցները կարող են բողոքարկվել Կանոնակարգի դրույթներին համապատասխան: Այնուամենայնիվ, բողոքարկումը պետք է գրավոր և հիմնավոր ներկայացվի ՀՖՖ բողոքարկման կոմիտեին բողոքարկվող միջոցի մասին ծանուցումից հետո երեք օրվա ընթացքում: Տվյալ բողոքներով բողոքարկման վճար չկա: Բողոքարկման կոմիտեի նախագահը կամ նրա կողմից առաջադրված անձը որոշում է կայացնում նման բողոքների վերաբերյալ միանձնյա: Նման որոշումները վերջնական են:

### Հոդված 48. Որոշումներ

1. Կարգապահական մարմինը կաշկանդված չէ որոշում կայացնել բացառապես վարույթը հարուցելու հիմքում ընկած հոդվածով և իրավունք ունի կիրառել Կանոնակարգի այլ համապատասխան դրույթներ՝ ելնելով քննության արդյունքներից:

2. Կարգապահական մարմինները որոշումները կայացնում են առանց հիմնավորումների, և կողմերին ծանուցվում է որոշման միայն օպերատիվ մասը, որով նրանք տեղեկացվում են, որ ծանուցումը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում ունեն բողոքարկման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու և որոշման հիմքերը պատվիրելու իրավունք: Նման հայտարարություն չներկայացնելու դեպքում որոշումը դառնում է վերջնական և պարտադիր, և համարվում է, որ կողմերը հրաժարվում են բողոք ներկայացնելու իրավունքից: Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց:

3. Եթե վերը նշված 1-ին կետով սահմանված ժամկետում պահանջվում է որոշման հիմքերը, ապա բողոքարկման ժամկետը սկսվում է միայն հիմքերի մասին ծանուցվելուց սկսած: Որոշման հիմքերը կարող են պահանջել միայն այն կողմերը, ում վերաբերում է որոշումը:

4. Կարգապահական մարմինների որոշումները մտնում են ուժի մեջ կայացման պահից: Կարգապահական մարմինների գրասենյակը յուրաքանչյուր դեպքում որոշման օպերատիվ մասը որոշման կայացման պահից 24 ժամվա ընթացքում հրապարակվում է ՀՖՖ պաշտոնական կայքում և ուղարկում է համապատասխան ակումբի՝ ՀՖՖ-ին ներկայացված էլեկտրոնային հասցեին, որից հետո որոշմամբ նշված ֆուտբոլային բոլոր սուբյեկտները համարվում են որոշման մասին պաշտոնապես ծանուցված: Բացառիկ դեպքերում կարգապահական մարմինն անհրաժեշտությունից ելնելով կարող սահմանել, որ որոշումը ենթակա չէ հրապարակման:

5. ՀՖՖ-ն կարող է, որպես որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության գործիք կիրառել Ֆուտբոլի կառավարման համակարգը՝ համապատասխան բաժնում լրացնելով Ֆուտբոլային սուբյեկտների նկատմամբ կայացված որոշումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկատվություն:

## ԳԼՈՒԽ 8. ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

### Հոդված 49. Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը և հարուցված վարույթի վերաբերյալ ծանուցումը

1. Կարգապահական խախտման գործով վարույթ հարուցելու հիմքերն են, այն տվյալները, որոնք ցույց են տալիս կարգապահական խախտման դեպքերի առկայության փաստը և որոնք առկա են՝
   1.1. խաղի արձանագրության մեջ,
   1.2. խաղի պատվիրակի և/կամ տեսուչի զեկույցների մեջ,
   1.3. ՀՖՖ գլխավոր քարտուղարության գրավոր միջնորդության մեջ,
   1.4. ֆուտբոլային սուբյեկտ հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց բողոքի մեջ, որի ապացուցման պարտականությունը կրում է բողոքաբերը,
   1.5. զանգվածային լրատվության միջոցների և/կամ հանրային աղբյուրներից ստացված այլ նյութեր:
2. Կարգապահական մարմինների հետ նամակագրությունն իրականացվում է disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեի միջոցով:
3. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավունք ունի իր նախաձեռնությամբ կարգապահական խախտման վերաբերյալ վարույթ հարուցել և պատասխանատվության միջոցներ կիրառել զանգվածային լրատվության միջոցների և/կամ հանրային աղբյուրներից ստացված այլ նյութերի հիման վրա:
4. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է մերժել կարգապահական խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը, եթե վարույթ հարուցելու հիմք հանդիսացող արձանագրությունում, զեկույցում թերի են ներկայացված ենթադրյալ խախտումները, իսկ միջնորդության կամ բողոքի դեպքում հստակ նշված չեն, թե ում կողմից, ինչ խախտում կատարելու մասին է խոսքը, կամ եթե ներկայացված չեն համապատասխան ապացույցները:
5. Եթե կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող արձանագրությունում, զեկույցում, միջնորդությունում, բողոքում առերևույթ առկա են կարգապահական խախտման հատկանիշներ, սակայն չկան ապացուցման բավարար հիմքեր, ապա Կոմիտեն կարող է դիմել ՀՖՖ գլխավոր քարտուղարություն՝ հանձնարարելու անցկացնել ծառայողական քննություն կամ ուսումնասիրություն, որի արդյունքները ենթակա են տրամադրման ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեին:
6. Խաղի ավարտից և/կամ կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող հանգամանքների ի հայտ գալուց (տեղեկացվելուց) հետո 72 ժամվա ընթացքում Գրասենյակը Կանոնակարգի 38-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված կարգով ծանուցում է համապատասխան ակումբին կարգապահական վարույթի հարուցման վերաբերյալ:
7. Ակումբը և/կամ համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը, ծանուցումը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում իրավունք ունի ներկայացնելու համապատասխան դիրքորոշում: Յուրաքանչյուր դեպքում, վարույթի արդյունավետ իրականացումն ապահովելու համար կարգապահական մարմնի որոշմամբ նշված ժամկետը կարող է նվազեցվել:
8. Ծանուցված վարույթը հարուցված հոդվածով չի համարվում վերջնական, և այն կարող է վերաորակվել վարույթի քննության ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հիման վրա:

### Հոդված 50. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեում վարույթի ձևը

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեում վարույթն իրականացվում է գրավոր: Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում ԿԷԿ նախագահի որոշմամբ կարող են անցկացվել լսումներ: Նման դեպքում կիրառելի են ՀՖՖ բողոքարկման կոմիտեի առջև լսումները և քննարկումները կարգավորող կանոնները:

## ԳԼՈՒԽ 9. ՎԱՐՈՒՅԹԸ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

### Հոդված 51. Բողոքարկումները, ժամկետները և վճարները

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
2. Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի Հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը:
3. Ներկայացված Հիմնավորված բողոքները պետք է պարունակեն իրավական պահանջը, փաստերի նկարագրությունը, ապացույցները, առաջարկվող վկաների ցանկը (նրանց սպասվող ցուցմունքների համառոտ ամփոփմամբ) և բողոքարկողի եզրակացությունները (մասնավորապես՝ բողոքարկման վարույթը բանավոր կամ գրավոր վարելու վերաբերյալ): Գրավոր և բանավոր վարույթների վերաբերյալ որևէ հայտարարված նախապատվության բացակայության դեպքում վարույթը կանցկացվի գրավոր: Կողմերն իրավասու չեն բողոքարկման հիմքերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո ներկայացնել հետագա գրավոր հայտարարություններ կամ ապացույցներ:
4. Անհետաձգելի դեպքերում ԲԿ նախագահը կարող է կրճատել սույն հոդվածով նախատեսված ժամկետները:
5. Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ: Տուրքի վճարումը հավաստող ապացույցը պետք է ներկայացվի Հիմնավորված բողոքի հետ միաժամանակ: Վճարը ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
6. Բողոքարկման վճարը վճարվում է ՀՖՖ հաշվեհամարին՝ անկանխիկ վճարում կատարելու միջոցով:
7. Սույն հոդվածով սահմանված կարգը և ժամկետները չպահպանվելու դեպքում ներկայացված բողոքը թողնվում է առանց քննության:

### Հոդված 52. Բողոքարկման ընդունելիությունը

1. ՀՖՖ կարգապահական կոմիտեի կողմից կայացված որոշումների դեմ բողոքարկումներն ընդունելի են, եթե առաջին ատյանում նշանակված կարգապահական տույժը չի սահմանափակվել հետևյալով՝
   1.1. նախազգուշացում,
   1.2. նկատողություն,
   1.3. ավտոմատ մեկ խաղով որակազրկում:

### Հոդված 53. Բողոքարկման հետևանքները

1. Որոշման բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:
2. Բացառիկ դեպքերում ԲԿ Նախագահողը, պատճառաբանված դիմում ստանալուց հետո, կարող է հետաձգել որոշման կատարումը:

### Հոդված 54. Բողոքի պատասխանը

1. Բողոքարկումն ընդունելուց հետո ԲԿ Նախագահը բողոքի մասին ծանուցում է ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեին, ինչպես նաև կարգապահական վարույթի մասնակիցներին: Բողոքի պատասխանը պետք է ներկայացվի ԲԿ նախագահի կողմից սահմանված ժամկետում: Այդ ժամկետից հետո կողմերն իրավասու չեն հետագա գրավոր դիմումներ կամ ապացույցներ ներկայացնելու:

2. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի անունից բողոքի պատասխան կարող է ներկայացնել կոմիտեի նախագահը կամ վերջինիս կողմից նշանակված այլ անդամ:

### Հոդված 55. Լսումներ

1. Բողոքարկման կոմիտեի վարույթն իրականացվում է բանավոր կամ գրավոր:
2. Վարույթի մասնակիցների հիմնավոր պահանջի դեպքում, կամ երբ Բողոքարկման մարմնի նախագահը դա անհրաժեշտ է համարում, նախագահը կարող է նշանակել նիստի օրը և հրավիրել կողմերին:
3. Եթե անցկացվում են լսումներ, ապա կողմերից յուրաքանչյուրը և ՀՖՖ կարգապահական կոմիտեի նախագահը կամ վերջինիս կողմից նշանակված այլ անդամ իրավունք ունեն երկու բանավոր դիրքորոշման: Նախագահողը որոշում է դիրքորոշումների ներկայացման հաջորդականությունը: Եթե առաջին կողմը հրաժարվում է երկրորդ անգամ դիրքորոշում ներկայացնելու իր իրավունքից, ապա դիրքորոշումների ներկայացումը դադարեցվում է:

### Հոդված 56. Խորհրդակցություններ և որոշումներ

1. Բողոքարկման կոմիտեն խորհրդակցում է փակ դռների հետևում:
2. Բողոքարկման վարույթի շրջանակներում Բողոքարկման կոմիտեն ունի փաստերը և իրավական դրույթները վերանայելու/գնահատելու քննելու բացառիկ իրավասություն:
3. Բողոքարկման կոմիտեի որոշումն ուժի մեջ է թողնում, փոփոխում կամ բեկանում է վիճարկվող որոշումը: Բողոքարկման կոմիտեն կարող է բեկանել վիճարկվող որոշումը և գործը հետ ուղարկել Կարգապահական և էթիկայի կոմիտե՝ նոր քննության:
4. Եթե բողոքարկման վարույթի ընթացքում ի հայտ գան նոր կարգապահական խախտումներ, դրանց վերաբերյալ կարող է որոշում կայացվել նույն վարույթի ընթացքում: Նման իրավիճակում պատասխանատվության միջոցի չափը կարող է ավելացվել:

Բողոքարկման կոմիտեի որոշումները ՀՖՖ շրջանակներում վերջնական են՝ առանց խախտելու ՀՖՖ կանոնադրությամբ նախատեսված՝ Սպորտային արբիտրաժային դատարան դիմելու իրավունքը:

## Ա. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| | Կարգապահական խախտումներ | Կիրառվող պատժամիջոցներ |
|---|---|---|
| 1. | Պրոֆեսիոնալ մրցումների մասնակցության հավաստագիր ներկայացնելուց հետո մինչև խաղաշրջանի սկիզբը տվյալ թիմի՝ մրցմանը մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ.<br>• Հայաստանի Պրեմիեր Լիգայի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Գավաթի խաղարկության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով։ |
| 2. | Սահմանված հայտավորման ժամկետները խախտելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար։ |
| 3. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների ընթացքում մրցմանը սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Հայաստանի Պրեմիեր Լիգայի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկի (3,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում տվյալ առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, հաջորդ մրցաշրջանում միայն Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն։<br>• Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկի (1,500,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում տվյալ առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, հաջորդ մրցաշրջանում Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորությունից զրկում։ |
| 4. | Գավաթի խաղարկության մրցաշարի ընթացքում սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի (3,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում ԳԽ մրցաշարից, հաջորդ մրցաշրջանում Գավաթի խաղարկության մասնակցության իրավունքից զրկում։ |

| | | |
|---|---|---|
| 5. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների ընթացքում անհարգելի պատճառով թիմի չներկայանալը խաղին | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ՝ ՀՊԼ առաջնությունում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (2,000,000 մինչև 5,000,000 ՀՀ դրամ) չափով, ԱԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարհինգապատիկի (500,000 մինչև 1,500,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: |
| 6. | Գավաթի խաղարկության ընթացքում անհարգելի պատճառով թիմի չներկայանալը խաղին | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երեքհազարապատիկի (1,000,000-ից մինչև 3,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով և հաջորդ մրցաշրջանում Գավաթի խաղարկության մասնակցության իրավունքից զրկում: |
| 7. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների ընթացքում անհարգելի պատճառով թիմի՝ երկու խաղի չներկայանալը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Հայաստանի Պրեմիեր Լիգայի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկից մինչև տասհազարապատիկի (4,000,000 մինչև 10,000,000 ՀՀդրամ) չափով թիմի հեռացում առաջնությունից և տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, հաջորդ մրցաշրջանում միայն Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն,<br>• Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի ի հազարապատիկից մինչև երեքհազարապատիկի (1,000,000 մինչև 3,000,000 ՀՀդրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից և տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, հաջորդ մրցաշրջանում Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորությունից զրկում: |
| 8. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների ընթացքում երեք տեխնիկական պարտություն (բացառությամբ սույն հոդվածի7-րդ կետում նշված դեպքերի) ստանալը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ.<br>• Հայաստանի Պրեմիեր Լիգայի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի (3,000,000 ՀՀ դրամ) չափով,թիմի հեռացում առաջնությունից, զրկում տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից և հաջորդ մրցաշրջանում միայն Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն, |

| | | |
|---|---|---|
| | | • Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկ (1,500,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, զրկում տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից և հաջորդ մրցաշրջանում Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորությունից զրկում: |
| 9. | Գավաթի խաղարկության խաղին թիմի տեխնիկական պարտություն ստանալը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (1,000,000-ից մինչև 5,000,000 ՀՀ դրամ) չափով, տվյալ խաղում թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: |
| 10. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղի ժամանակահատվածում թիմի մարզադաշտ մուտք գործելուց հետո թիմի կողմից խաղադաշտ դուրս չգալը կամ խաղադաշտն ինքնակամ լքելը, որի հետևանքով խաղը չի կայանում կամ չի շարունակվում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչևչորսհազարապատիկի (2,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն կետով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատա- վարձի չորսհազարապատիկից մինչև ութհազարապատիկի (4,000,000-ից մինչև 8,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում նվազեցրած 6 միավորով մեկնարկ:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 1 տարի ժամկետով: |
| 11. | Գավաթի խաղարկության տվյալ խաղի ժամանակահատվածում թիմի մարզադաշտ մուտք գործելուց հետո թիմի կողմից խաղադաշտ դուրս չգալը կամ խաղադաշտն ինքնակամ լքելը, որի հետևանքով խաղը չի կայանում կամ չի շարունակվում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչևչորսհազարապատիկի (2,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, թիմի հեռացում ԳԽ մրցաշարից, ինչպես նաև Գավաթի խաղարկության հաջորդ մրցաշրջանում մասնակցության իրավունքից զրկում:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են |

| | | |
|---|---|---|
| | | ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/ենմինչև 1 տարի ժամկետով: |
| 12. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերից որևէ մեկի ֆուտբոլիստ/ներ/ի և/կամ թիմի անձնակազմի և/կամ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ, ոչ մարզական գործողությունների պատճառով խաղը չմեկնարկելը կամ չշարունակվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչևչորսհազարապատիկի (2,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն կետով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն ան առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկից մինչև ութհազարապատիկի (4,000,000-ից մինչև 8,000,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանուում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում:<br><br>Խախտում թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 1 տարի ժամկետով: |
| 13. | Գավաթի խաղարկության տվյալ խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերից որևէ մեկի ֆուտբոլիստ/ներ/ի և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ, ոչ մարզական գործողությունների պատճառով խաղը չմեկնարկելը կամ չշարունակվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչևչորսհազարապատիկի (2,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, թիմի հեռացում ԳԽ մրցաշարից, ինչպես նաև Գավաթի խաղարկության հաջորդ մրցաշրջանում մասնակցության իրավունքից զրկում:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած պաշտոնատար անձը/անձինք և թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 1 տարի ժամկետով: |
| 14. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում պատճառ է/են դարձել | Առաջացնում է խախտում թույլ տված թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երեքհազարապատիկի (1,000,000-ից մինչև 3,000,000 ՀՀ դրամ) չափով և/կամ թիմի տվյալ առաջնության մրցաշարային աղյուսակի ընդհանուր միավորների քանակից 3 միավորի իջեցում: Խախտման պատճառ հանդիսացած պաշտոնատար անձի/անձանց |

| | | |
|---|---|---|
| | անկարգության/ների, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել | և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ի նկատմամբ զրկում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 30 խաղով կամ մինչև 1 տարի ժանկետով: |
| 15. | Գավաթի խաղարկության տվյալ խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում պատճառ է/են դարձել անկարգության/ների, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել | Առաջացնում է խախտում թույլ տված թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի (1,000,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտման պատճառ հանդիսացած պաշտոնատար անձի/անձանց և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ի նկատմամբ զրկում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 30 խաղով կամ մինչև 1 տարի ժամկետով: |
| 16. | Սույն հոդվածի 14-րդ և 15-րդ կետերում նշված գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում և դրա շրջակա տարածքում առաջացրել են անկարգություններ, բայց խաղի մեկնարկի, շարունակության և/կամ արդյունքի վրա ազդեցություն չեն թողել | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (200,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով, խախտում թույլ տված պաշտոնատար անձանց և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ի՝ ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև մինչև տարի, խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 10 խաղով կամ մինչև 6 ամիս: |
| 17. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկականգոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը դադարել է, բայց խաղի արդյունքի վրա ազդեցություն չի թողել և խաղը շարունակվել է | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով, խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամ/ներ/ը և/կամ պաշտոնյան/ները զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 6 խաղով, և/կամ առաջացնում է ֆուտբոլիստների որակազրկում մինչև 4 խաղով: |
| 18. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկական գոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել | Առաջացնում է խախտում թույլ տված թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի (1,000,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամ/ներ/ը և/կամ պաշտոնատար անձինք ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում են 3-10 խաղով, և/կամ առաջացնում է խախտում թույլ տված ֆուտբոլիստների որակազրկում 3-10 խաղով: |

| | | |
|---|---|---|
| 19. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը չկայանալու կամ չշարունակվելու դեպքում | Առաջացնում է մեղավոր թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով և տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երկուհազարապատիկի (2,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 20. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը դադարել է, բայց դրանից հետո խաղը շարունակվել է և խաղի արդյունքի վրա չի ազդել | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 21. | Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու, երկրպագուների կողմից մրցավարների, պատվիրակի, տեսուչի, ֆուտբոլիստների և պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը: | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով (500-3,000,000 ՀՀ դրամ) և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների: |
| 22. | Դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իրեր նետելը: | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ ՀՊԼ և ԳԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000 մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով, ԱԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի (1,000,000 մինչև 2,000,000 ՀՀդրամ) չափով և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների: |
| 23. | Խաղի ժամանակահատվածում հյուր թիմի երկրպագուների կողմից մրցավարների, տեսուչի, ֆուտբոլիստների և պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտա-հայտություններ, հայհոյանքներ, անհարգա-լից արարքներ թույլ տալը: | Առաջացնում է տուգանքի նշանակում հյուր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երեքհազարապատիկի (500,000-3,000,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ նկատողություն և/կամ տուգանք նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 24. | Հյուր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իրեր նետելը: | Հյուր թիմի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ ՀՊԼ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000 մինչև 1,000,000 ՀՀդրամ) չափով, ԱԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի (1,000,000 մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների:<br><br>Դաշտի տեր թիմի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ ՀՊԼ և ԳԽ |

| | | |
|---|---|---|
| | | առաջնությունում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (250,000 մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով, ԱԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000 մինչև 1,000,000 ՀՀդրամ) չափով: |
| 25. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում դաշտի տեր կամ հյուր թիմի երկրպագուների կողմից պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ, ցանկացած տեսակի հրավառ նյութեր կիրառելը: | Առաջացնում է տուգանքի նշանակում՝<br><br>Կիրառելու դեպքում՝<br><br>Մեղավոր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով<br><br>նետելը՝<br><br>Մեղավոր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի (400,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Խաղադաշտ նետելը՝<br><br>Մեղավոր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի (600,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի (300,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Նետելու արդյունքում ցանկացած ֆուտբոլային սուբյեկտի կպնելը՝<br><br>Մեղավոր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ 1 հրավառ նյութի համար նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով |
| 26. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում երկրպագուների կողմից լազերների կամ այլ լուսարձակող միջոցների օգտագործման դեպքում, որի հետևանքով խաղը չի դադարել | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| | | Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում մինչև նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով: |
| 27. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում երկրպագուների կողմից լազերների կամ այլ լուսարձակող միջոցների օգտագործման դեպքում, որի հետևանքով խաղը դադարել, բայց շարունակվել է | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում մինչև նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով: |
| 28. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում երկրպագուների կողմից լազերների կամ այլ լուսարձակող միջոցների օգտագործման դեպքում, որի հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել | Առաջացնում է մեղավոր թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի (300,000 ՀՀ դրամ) չափով, և տվյալ թիմը մինչև 3 խաղ անցկացնում է առանց հանդիսատեսի: Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքինշանակում մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 29. | 27-րդ և 28-րդ կետերում նշված գործողությունների կրկնության դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկիցմինչև երեքհարյուրապատիկի (50,000-ից մինչև 300,000 ՀՀ դրամ) չափով և/կամ մարզադաշտի որակազրկումտվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների: |
| 30. | Խաղի ժամանակահատվածում երկրպագուների, թիմերի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ պաշտոնյա/ներ/ի, ֆուտբոլիստ/ներ/ի կողմից ռասիզմի, այլ խտրականության դրսևորման և պրոպագանդման դեպքում: | Առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տվածակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (1,000,000-5.000,000 ՀՀ դրամ) չափով և/կամմինչև 2 խաղի անցկացում առանց հանդիսականների: Խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամները/պաշտոնյաները զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից առնվազն 10 խաղով, իսկ ֆուտբոլիստները որակազրկվում են առնվազն 10 խաղով: |

| | | |
|---|---|---|
| 31. | Խաղի ժամանակահատվածում ֆուտբոլիստների, թիմերի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց անպարկեշտ, անվայել վարքագծի ու ոչ սպորտային պահվածքի դեպքում | Խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամների/պաշտոնատար անձանց նկատմամբ առաջացնում է նկատողություն և/կամ ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 10 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի (200,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 8 խաղով, և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրպատիկից մինչև երկուհազարապատիկի (200,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 32. | Խաղը սպասարկող անձնակազմի կամ դրա որևէ անդամի հասցեին պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստների կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու (ինչպես նաև հայհոյելու), հարվածելու, հարվածելու փորձ իրականացնելու դեպքում | Թիմի անձնակազմի անդամները/պաշտոնատար անձինք զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 1 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում են մինչև 1 տարի ժամկետով, և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երեքհազարապատիկի (500,000-3,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 33. | Խաղի ժամանակահատվածում պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստ/ներ/ի կողմից մրցավար/ներ/ի կայացրած որոշման/ների նկատմամբ անհամաձայնության դրսևորումների/ժեստերի դեպքում | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով, թիմի անձնակազմի անդամները/պաշտոնատար անձինք զրկվում են ծառայողական պարտականությունները իրականացնելու իրավունքից մինչև 10 խաղով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 5 խաղով: |
| 34. | Խաղի ժամանակահատվածում ոստիկանության ներկայացուցչի/ների դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների և/կամ կարգադրիչների բացակայության և/կամ ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելը: | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ ՀՊԼ և ԳԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (200,000 մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով, ԱԽ առաջնությունում նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (50,000 մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 35. | Նախախաղային խորհրդակցությանը սահմանված անձանց ուշանալու կամ չմասնակցելու դեպքում | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանք մեղավոր ակումբի նկատմամբ մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 36. | Խաղն ուշացումով սկսելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 37. | Խաղը սահմանված քանակի տեսախցիկով չտեսագրելու, ընդհանրապես չտեսագրելու կամ թերի տեսագրելու, ՀՖՖ-ի պահանջով խաղի տեսագրությունը ժամանակին կամ ընդհանրապես չներկայացնելու, ջնջելու կամ տեխնիկական հնարքներով համակցելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 38. | Դաշտի տեր ակումբը ՀՖՖ-ի կողմից տրամադրված ետնապատի և ֆլեշ-գոտու վահանակի առկայությունը մամուլի ասուլիսների սրահում և խառը գոտում չապահովելու կամ թերի ապահովելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ մինչև նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 39. | Դաշտի տեր ակումբի կողմից մամուլի ասուլիսների ու ֆլեշ-հարցազրույցների ետնապատերի ոչ պատշաճ պահպանության, վնասելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 40. | Ակումբի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտի տարածքում ՀՖՖ կողմից տեղադրված մարքեթինգային և գովազդային նյութերի վնասումը, ոչնչացումը կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձնելը | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 41. | Ակումբի կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտի գովազդային կողավահանակների ոչ պատշաճ տեղադրման ու հեռուստատեսային և ինտերնետային հեռարձակման ժամանակ թերի տեսանելիության դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 42. | Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի կողմից գովազդային կողավահանակների՝ ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից նախապես հաստատված շարվածքը չապահովելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 43. | Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի կողմից մարզադաշտի տարածքում այդ թվում նաև տրիբունաների վրա ցանկացած չափի, ձևի գովազդների (բացառությամբ ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից նախապես հաստատված գովազդային կողավահանակները) տեղադրման դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 44. | Թվային հարթակներում (այդ թվում՝ սոցցանցերում), ֆիզիկական կրիչների վրա (տպագրություն, մերչենդայզինգ և այլն) պաշտոնական նամակագրություններում և հնարավոր այլ դեպքերում Ակումբի կողմից մրցաշարի անվանման ու տարբերանշանի թերի կամ ոչ ճիշտ կիրառումը | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 45. | Ակումբի կողմից մրցաշարի հանդիպումների հեռուստատեսային և առցանց հեռարձակման իրավունքը խախտելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի (500,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 46. | Խաղի մեկնարկից ոչ ուշ, քան 15 րոպե առաջ դաշտի տեր ակումբի կողմից վիճակահանության նետման համար բրենդավորմամբ կամարի առկայությունը խաղադաշտում չապահովելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 47. | Դաշտի տեր ակումբի կողմից մարզադաշտի՝ մամուլի ասուլիսների անցկացման համար նախատեսված սրահը պատշաճ կերպով չնախապատրաստելու և/կամ չտրամադրելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (200,000-ից մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 48. | Դաշտի տեր ակումբի կողմից ֆլեշ-հարցազրույցների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը չապահովելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 49. | Խաղի մեկնարկից առաջ դաշտի տեր ակումբի կողմից մրցաշարի բրենդավորված գնդակի տակդիրը վազքուղու վրա՝ թունելի դիմաց, չտեղադրելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (100,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 50. | Դաշտի տեր ակումբի կողմից անվտանգության նորմերը չպահպանելու դեպքում՝ թույլատրելով առանց համապատասխան հավատարմագրման լրագրողական անցագրերով որևէ մեկի հասանելիությունն այն հատվածին, որտեղ անցկացվում են ֆլեշ-հարցազրույցները | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (50,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 51. | Խաղից անմիջապես հետո կազմակերպված մամուլի ասուլիսին կամ ֆլեշ-հարցազրույցին անհարգելի պատճառով թիմի գլխավոր մարզչի չմասնակցելը (իսկ գլխավոր մարզչի հարգելի բացակայության պարագայում գլխավոր մարզչի պաշտոնակատարի չմասնակցելը) և/կամ մամուլի ասուլիս սահմանված կարգով չկազմակերպելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (200,000-ից մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 52. | Խաղից անմիջապես հետո կազմակերպված մամուլի ասուլիսին կամ ֆլեշ-հարցազրույցին օտարերկրյա մարզիչների համար հայերեն թարգմանությունը չապահովելը կամ թերի ապահովելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (100,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 53. | Խաղից անմիջապես հետո կազմակերպված մամուլի ասուլիսի կամ ֆլեշ-հարցազրույցի ընթացքում մարզիչ/ներ/ի և/կամ ֆուտբոլիստ/ներ/ի անվայել արտահայտությունների, ժեստերի, կարծիքների, լրագրողներին վիրավորելու, ՀՖՖ-ի մասին ոչ հավաստի, ոչ հիմնավորված մեղադրանքեր հնչեցնելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի (500,000-2,000,000 ՀՀ դրամ) չափով, խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամները/պաշտոնատար անձինք զրկվում են պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 5 խաղով, իսկ խախտում թույլ տված ֆուտբոլիստները որակազրկվում են մինչև 5 խաղով: |
| 54. | Խաղի ժամանակահատվածում հավատարմագրման համակարգի թերի կիրառումը, ինչպես նաև հավատարմագրերի բացակայությունը | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (20,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 55. | Դաշտի տեր ակումբի կողմից խաղը սպասարկող մրցավարական անձնակազմի նախավարժանքի համար առանձնացված տարածք չսահմանելու, թիմերի ֆուտբոլիստներին և անձնակազմերի կողմից սահմանված գոտի մուտք գործելը | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| | չարզելելու, թերի կազմակերպելու դեպքերում | |
| 56. | Դաշտի տեր ակումբի կողմից դոպինգ ստուգման պայմաններին համապատասխանող սենյակ չտրամադրելու կամ սենյակը ոչ պատշաճ կերպով նախապատրաստելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000-ից մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 57. | Դաշտի տեր ակումբի կողմից Դոպինգ սպայի (ԴՍ) համար կենտրոնական տրիբունայում մեկ նստատեղ չապահովելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հարյուրապատիկի (20,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 58. | Դաշտի տեր ակումբի կողմից դոպինգ ստուգման կցորդ (ԴՍԿ) չնշանակելու դեպքում և ԴՍԿ-ի կողմից իր պարտականություններն ոչ պատշաճ կերպով իրականացնելու դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (50,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 59. | Խաղի համար դոպինգ սպայի օգնականների (շապերոնների) բացակայության կամ իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման դեպքում | Առաջացնում է ակումբին նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (30,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 60. | Խաղի արձանագրությունում չնշված անձանց տեխնիկական գոտում գտնվելու, ինչպես նաև այդ գոտում գտնվողների համար սահմանված պահանջների խախտման դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 61. | Խաղին որակազրկված ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի մասնակցության դեպքում | Առաջացնում է թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտում թույլ տված ֆուտբոլիստը որակազրկում է 1 խաղով, իսկ թիմի անձնակազմի անդամը զրկվում է ծառայողական պարտականությունների իրականացման իրավունքից 1 խաղով: |

| | | |
|---|---|---|
| 62. | Խաղին չհայտավորված կամ խաղի արձանագրության մեջ չնշված ֆուտբոլիստի և/թիմի անձնակազմի անդամի մասնակցության դեպքում | Առաջացնում է թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի (300,000 ՀՀ դրամ) չափով: |
| 63. | Խաղադաշտում միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում մարզված կամ Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ առնվազն 3 ֆուտբոլիստներ չլինելու դեպքում | Առաջացնում է թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի (300,000 ՀՀ դրամ) չափով: |
| 64. | ՀՖՖ-ին ոչ հավաստի կամ աղավաղված տվյալների, տեղեկության տրամադրման դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 65. | Ֆուտբոլիստների պայմանագրերի փոփոխության կամ լրացման դեպքերում 15-օրյա ժամկետում ՀՖՖ գրանցման չներկայացնելը | Առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով: |
| 66. | ՀՖՖ պահանջով երկու աշխատանքային օրվա ընթացքում ակումբի կողմից բացատրագիր չներկայացնելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով: |
| 67. | Ֆուտբոլային սուբյեկտի կողմից հակադոպինգային կանոնների խախտում թույլ տալը | Պատժվում է համաձայն Համաշխարհային հակադոպինգային կազմակերպության օրենսգրքի, առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև տասհազարապատիկի (100,000-ից մինչև 10,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 68. | Ակումբի պաշտոնատար անձանց կամ թիմի անձնակազմի անդամների կողմից իրենց ֆուտբոլիստին ազգային հավաքական թիմեր չգործուղելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (1,000,000-ից մինչև 5,000,000 ՀՀ դրամ) չափով, նույն ժամանակահատվածում իր թիմի կազմում ֆուտբոլիստի հանդես գալն առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում 4-ից 8 խաղով: |
| 69. | Ազգային ֆուտբոլային շարժմանը վնաս հասցնող գործողությունների դեպքում, երբ տվյալ պաշտոնատար անձի, թիմի անձնակազմի անդամի կամ ֆուտբոլիստի ներկայությունը դառնում է ֆուտբոլային ոլորտում անընդունելի | Պաշտոնատար անձը և/կամ թիմի անձնակազմի անդամը հայտարարվում է «Անցանկալի անձ» (Լատ.՝ «Persona non grata»), կամ առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում մինչև 5 տարի ժամկետով: |

| | | |
|---|---|---|
| 70. | ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումը կամ քաղվածքը ստանալուց հետո ակումբի կողմից տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ չմարած տուգանքի 25%-ի չափով: Հաջորդիվ յուրաքանչյուր 30 օր անց տուգանքի գումարին ավելանում 25%, բայց ոչ ավել, քան սահմանված տուգանքի կրկնապատիկը: |
| 71. | Թիմերի մարզաշապիկների՝ ՀՖՖ պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգով սահմանված պահանջները չապահովելը կամ թերի ապահովելը | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (20,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 72. | Խաղի ժամանակահատվածում տոմսային համակարգի թերի կիրառումը կամ տոմսայինհամակարգի բացակայությունը | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (20,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 73. | Խաղի ժամանակահատվածում մրցավարներին փոխարինման սարքին էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելը | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (20,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով: |
| 74. | Խաղի կազմակերպչական աշխատանքների՝ կանոնակարգերով սահմանված կարգի խախտմամբ կամ թերի կատարում, կամ չկատարում | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի (50,000-ից մինչև 500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 75. | ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից հարցման հիման վրա անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր, տեսագրություններ, բացատրություններ և առկա այլ տեղեկություններ չտրամադրելը | Առաջացնում է ֆուտբոլային սուբյեկտների նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 76. | ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստի մասնակից/հրավիրված ֆուտբոլային սուբյեկտների կողմից քննության բնականոն ընթացքը խախտելու դեպքում | Առաջացնում է տվյալ ֆուտբոլային սուբյեկտի հեռացում նիստից և/կամ նկատողություն և/կամ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 77. | Առանց հարգելի պատճառների ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստին հրավիրված ֆուտբոլային սուբյեկտների չներկայանալը | Առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 78. | Կորցրած ՀՖՖ նույնականացման քարտի կրկնօրինակը տրամադրելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով յուրաքանչյուր քարտի համար: |
| 79. | ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի կամ ՈՒԵՖԱ, ՖԻՖԱ, ՀՖՖ այլ կանոնակարգերի դրույթների խախտումները, որոնք սահմանված չեն սույն կանոնակարգում | Առաջացնում են նկատողություն մեղավոր ակումբի նկատմամբ, և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով:<br>Այն դեպքերում, երբ խախտման հետևանքով ենթադրվում է տեխնիկական պարտության կիրառում, մեղավոր թիմի նկատմամբ գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով: |

## Բ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ, ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| h/h | Կարգապահական խախտումներ | Կիրառվող պատժամիջոցներ |
|---|---|---|
| 1. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 5-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով: |
| 2. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 10-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 2 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով: |
| 3. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանումֆուտբոլիստի 11-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնապատիկ (10,000 ՀՀ դրամ) x N* չափով:<br><br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 4. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 3-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 5. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 5-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/պաշտոնատար անձի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 2 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի (60,000 ՀՀ դրամ) չափով: |
| 6. | ՀՊԼ և ԱԽ առաջնությունների տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 6-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/պաշտոնատար անձի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկ (20,000 ՀՀ դրամ) x N* չափով:<br><br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 7. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 2-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է Գավաթի խաղարկությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 8. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 3-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է Գավաթի խաղարկությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնապատիկ (10,000 ՀՀ դրամ) x N* չափով:<br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 9. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 2-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով: |
| 10. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 3-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) x N* չափով:<br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 11. | Առաջնության նույն խաղում 2 զգուշացում ստանալը, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի քանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով: |
| 12. | Առաջնության նույն խաղում 2 զգուշացում ստանալը, որի հետևանքով թիմի անձնակազմի անդամը/ակումբի պաշտոնյան հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 2 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 13. | Առաջնության խաղին մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 14. | Գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտման դեպքում, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում 2-5 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսունապատիկի (100,000-ից մինչև 150,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 15. | Բռնարարքը ոչ խաղային դրվագում, խաղի ժամանակահատվածում մրցակցի, թիմակցի, ակումբի պաշտոնյայի, խաղը սպասարկող անձնակազմի, հանդիսատեսի կամ ցանկացած այլ անձի նկատմամբ, որի համար ֆուտբոլիստը, թիմի անձնակազմի անդամը և/կամ պաշտոնյան հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում 2-8 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչևչորսհարյուրապատիկի (100,000-ից մինչև 400,000 ՀՀ դրամ) չափով: |
| 16. | Մարզադաշտում ծեծկռտուքի մասնակցելը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի, ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում 2-10 խաղով, և մեղավոր ակումբ/ներ/ը տուգանվում է/են նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկին (500,000-1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 17. | Խաղընկերոջ, մրցակցի, թիմերի անձնակազմի անդամների, պաշտոնատար անձանց և հանդիսատեսների հասցեին կամ անհասցե վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը, ինչպես նաև վերոնշյալ անձանց հարվածելը կամ հարվածելու փորձ կատարելը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի, ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում և/կամ ֆուտբոլիստի որակազրկում մինչև 10 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000-1,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 18. | Խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ հաշվեհարդարի փորձի կամ հաշվեհարդարի դեպքում | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում մինչև 1 տարի ժամկետով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի (մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով: |
| 19. | Խաղի կանոններում նշված հեռացման արժանի այլ խախտում իրականացնելու համար թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի տեխնիկական գոտուց հեռացման դեպքում | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 6 խաղ ժամկետով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով: |
| 20. | Վիդեո Օպերացիոն Սենյակ մտնելու/մտնելու փորձ իրականացնելու դեպքում, որի պատճառով ֆուտբոլիստ/ներ/ը և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը, ակումբի պաշտոնյան/ները հեռացվել են խաղադաշտից | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի, ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում և/կամ ֆուտբոլիստի որակազրկում մինչև 6 խաղ ժամկետով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հազարապատիկի (1,000,000 ՀՀ դրամ) չափով: |

## Գ. ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| | Կարգապահական խախտումը | Կիրառվող պատժամիջոցը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1. | ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործող կանոնակարգի չափանիշների (բացառությամբ՝ ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգով սահմանված «Բ» կարգի պահանջների) խախտման պատճառով ՈՒԵՖԱ-ի արտոնագրի մերժման կամ հետ կանչման դեպքում | Ակումբը տուգանվում է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև չորսհազարապատիկի (3,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով և/կամ թիմի ընդհանուր միավորների քանակից հանվում է 5 միավոր | Կիրառվում է ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող ակումբների նկատմամբ |
| 2. | ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործող կանոնակարգի չափանիշների (բացառությամբ՝ ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգով սահմանված «Բ» կարգի պահանջների) խախտման պատճառով Ազգային արտոնագրի մերժման կամ հետ կանչման դեպքում | Ակումբը տուգանվում է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև չորսհազարապատիկի (3,000,000-ից մինչև 4,000,000 ՀՀ դրամ) չափով և/կամ ակումբի առաջին թիմն իջեցվում է ավելի ցածր խումբ | Կիրառվում է ՀՊԼ առաջնությանը մասնակցող ակումբներինկատմամբ |
| 3. | ՀՖՖ Առաջին խմբի առաջնության արտոնագրման գործող կանոնակարգի չափանիշների (բացառությամբ՝ ՀՖՖ Առաջին խմբի առաջնության արտոնագրման կանոնակարգովսահմանված «Բ» կարգի պահանջների) խախտման պատճառով Առաջին խմբի արտոնագրի մերժման կամ հետ կանչման դեպքում | Ակումբը տուգանվում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի (1,000,000-ից մինչև 2,000,000 ՀՀ դրամ) չափով և/կամ ակումբի թիմը դուրս է մնում առաջնությունից | Կիրառվում է Առաջին խմբի առաջնությանը մասնակցող ակումբների նկատմամբ |
| 4. | ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործող կանոնակարգի և ՀՖՖ Առաջին խմբի առաջնության արտոնագրման կանոնակարգի «Բ» կարգի պահանջների չկատարման կամ խախտման դեպքում | Ակումբը տուգանվում է մինչև նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի (2,000,000 ՀՀ դրամ) չափով | Կիրառվում է ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին, ինչպես նաև ՀՊԼ և Առաջին խմբի առաջնություններին մասնակցող ակումբների նկատմամբ |
| 5. | ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի այլ խախտումների (փաստաթղթերը ուշացումով ներկայացնելու, թերի, ոչ հավաստի տեղեկության տրամադրման և այլն) դեպքում | Ակումբը տուգանվում է մինչև նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի (500,000 ՀՀ դրամ) չափով | Կիրառվում է ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին, ինչպես նաև ՀՊԼ և Առաջին խմբի առաջնություններին մասնակցող ակումբների նկատմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Սույն հոդվածի 5-րդ կետում նշված գործողությունների կրկնման դեպքում | Ակումբը տուգանվում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000-ից մինչև 1,000,000 ՀՀ դրամ) չափով | Կիրառվում է ՌԻԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին, ինչպես նաև ՀՊԼ և Առաջին խմբի առաջնություններին մասնակցող ակումբների նկատմամբ |

## Դ. ԱՅԼ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԱԿՈՒՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. ՀՖՖ վերաբերելի կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի գլխավոր մարզիչ չգրանցված անձի, ներառյալ ակումբի մեկ այլ պաշտոնում գրանցված անձի կողմից, Գլխավոր մարզչի պարտականությունների փաստացի կատարումը մեկ մրցաշրջանի ընթացքում երկուսից ավելի անգամ, ինչպես նաև ակումբի կողմից տվյալ անձի պարբերաբար ներկայացումը որպես ակումբի գլխավոր մարզիչ (ներառյալ համացանցում, տպագիր մամուլում, փաստաթղթերում և այլ եղանակներով)՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ 7,000,000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև առաջացնում է տվյալ պաշտոնյայի որակազրկում մինչև 3 (երեք) խաղով, և/կամ տվյալ պաշտոնյայի նկատմամբ տուգանքի նշանակում 2,000,000 ՀՀ դրամի չափով:
2. Սույն կետը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ ՀՖՖ վերաբերելի կանոնակարգով սահմանված կարգով որպես ակումբի գլխավոր մարզիչ գրանցված անձը խաղին բացակայում է որակազրկման կամ այլ օբյեկտիվ պատճառներով, և վերջինիս փոխարեն սահմանված կարգով գլխավոր մարզչի համապատասխան գործառույթներն իրականացնում է ակումբի գլխավոր մարզչի օգնականը:

## Ե. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| հ/հ | Կարգապահական խախտումներ | Կիրառվող պատժամիջոցներ |
|---|---|---|
| 1. | Մանկապատանեկան մրցումների մասնակցության հավաստագիր ներկայացնելուց հետո մինչև խաղաշրջանի սկիզբը տվյալ թիմի մրցման մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով (ամեն թիմի համար):<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով (ամեն թիմի համար): |
| 2. | Սահմանված հայտավորման ժամկետները խախտելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար։<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կեսի (500 ՀՀ դրամ) չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար։ |
| 3. | Առաջնության ընթացքում մրցմանը սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում տվյալ առաջնությունից, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում տվյալ առաջնությունից, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն: |
| 4. | Գավաթի խաղարկության մրցաշարի ընթացքում սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում ԳԽ մրցաշարից, հաջորդ մրցաշրջանում Գավաթի խաղարկության մասնակցության իրավունքից զրկում: |

| | | |
|---|---|---|
| | | • Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում ԳԽ մրցաշարից: |
| 5. | Առաջնության ընթացքում անհարգելի պատճառով թիմի չներկայանալը խաղին | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (70,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ13, Մ14, Մ15 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (50,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկից մինչև հարյուրապատիկի (30,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ առաջացնում է նախազգուշացում կամ նկատողութուն: |
| 6. | Գավաթի խաղարկության ընթացքում անհարգելի պատճառով թիմի չներկայանալը խաղին | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (70,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում Գավաթի խաղարկության մասնակցության իրավունքից զրկում:<br>• Մ13, Մ14, Մ15 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (50,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկից մինչև հարյուրապատիկի (30,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ առաջացնում է նախազգուշացում կամ նկատողություն: |

| | | |
|---|---|---|
| 7. | Առաջնության ընթացքում անհարգելի պատճառով թիմի՝ երկու խաղի չներկայանալը | Առաջացնում է թիմի հեռացում առաջնությունից և տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում, տուգանքինշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (70,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ13, Մ14. Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (50,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ), թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկից մինչև հարյուրապատիկի (30,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, |
| 8. | Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների ընթացքում երեք տեխնիկական պարտություն (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ կետում նշված դեպքերի) ստանալը իսկ Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում թիմի մեղքով երեք անգամ խաղի չկայանալու կամ չշարունակվելու դեպքում | Առաջացնում է թիմի հեռացում առաջնությունից և տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում և տուգանքինշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (40,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ13, Մ14, Մ15 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երկուհարյուրապատիկի (20,000-ից մինչև 200,000 ՀՀ դրամ) չափով, հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հարյուրապատիկի (10,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, հաջորդ մրցաշրջանում միայն C |

| | | |
|---|---|---|
| | | խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն: |
| 9. | Գավաթի խաղարկության ընթացքում մրցափուլի ընթացքում երկու խաղ ունենալու պարագայում Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնություննների դեպքում թիմի՝ տեխնիկական պարտություն ստանալը իսկ Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում թիմի խաղին չներկայանալը, թիմի մեղքով խաղի չկայանալը կամ չշարունակվելը | Առաջացնում է թիմի հեռացում Գավաթի խաղարկությունից և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների դեպքում՝ մինչև նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում Գավաթի Խաղարկության մասնակցության իրավունքից զրկում:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ մինչև նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում Գավաթի Խաղարկության մասնակցության իրավունքից զրկում:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում Գավաթի Խաղարկության մասնակցության իրավունքից զրկում: |
| 10. | Առաջնության խաղի ժամանակահատվածում թիմի կողմից խաղադաշտն ինքնակամ լքելը, որի հետևանքով խաղը չի կայանում կամ չի շարունակվում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասներեքապատիկի (13,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ առաջացնում է նախազգուշացում կամ նկատողություն:<br>Սույն հոդվածով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների |

| | | |
|---|---|---|
| | | խաղերին մասնակցելու իրավունքից զրկում, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում, ինչպես նաև հաջորդ մրցաշրջանում միայն C խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորություն:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են ՝ մինչև 1 տարի ժամկետով: |
| 11. | Գավաթի խաղարկության խաղի ժամանակահատվածում թիմի կողմից խաղադաշտն ինքնակամ լքելը, որի հետևանքով խաղը չի կայանում կամ չի շարունակվում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասներեքապատիկի (13,000 ՀՀ դրամ) չափով, և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամը/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ |

| | | |
|---|---|---|
| | | ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 1 տարի ժամկետով: |
| 12. | Առաջնության խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերից որևէ մեկի՝ ֆուտբոլիստ/ներ/ի, թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ, ոչ մարզական գործողությունների պատճառով խաղը չմեկնարկելը կամ չշարունակվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն հոդվածով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն հոդվածով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ առաջացնում է նախազգուշացում կամ նկատողություն: Սույն հոդվածով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու |

| | | |
|---|---|---|
| | | իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 1 տարի ժամկետով: |
| 13. | Գավաթի խաղարկության խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերից որևէ մեկի՝ ֆուտբոլիստ/ներ/ի, թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ, ոչ մարզական գործողությունների պատճառով խաղը չմեկնարկելը կամ չշարունակվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով, և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով և թիմի հեռացում ԳԽ մրցաշարից:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են՝ մինչև 1 տարի ժամկետով: |
| 14. | Հանդիպման ժամանակահատվածում մրցակից թիմերի կողմից սույն հոդվածի 13-րդ և 14-րդ կետերում նշված խախտումները երկուստեք թույլ տալը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբների նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով, և երկու թիմերի նկատմամբ տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով և երկու թիմերի նկատմամբ տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, երկու թիմերի նկատմամբ նկատողություն:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են |

| | | |
|---|---|---|
| | | ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են՝ մինչև 1 տարի ժամկետով: |
| 15. | Առաջնության խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում պատճառ է/են դարձել անկարգության/ների, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել | Առաջացնում է խախտում թույլ տված ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն:<br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են՝ մինչև 15 խաղով: |
| 16. | Գավաթի խաղարկության խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում պատճառ է/են դարձել անկարգության/ների, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել | Առաջացնում է խախտում թույլ տված թիմի հեռացում մրցաշարից, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով:<br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են՝ մինչև 15 խաղով: |

| | | |
|---|---|---|
| 17. | Սույն հոդվածի 15-րդ և 16-րդ կետերում նշված գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում և դրա շրջակա տարածքում առաջացրել են անկարգություններ, բայց խաղի մեկնարկի, շարունակության և/կամ արդյունքի վրա ազդեցություն չեն թողել | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>Առաջացնում է խախտում թույլ տված պաշտոնատար անձանց/թիմի անձնակազմի անդամ/ներ/ի՝ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 10 խաղով և խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 10 խաղով: |
| 18. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկական զոտում գտնվող պահեստային Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը դադարել է, բայց խաղի արդյունքի վրա ազդեցություն չի թողել և խաղը շարունակվել է | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>Խախտում թույլ տված պաշտոնյա/ներ/ը և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 6 խաղով և/կամ առաջացնում է ֆուտբոլիստների որակազրկում մինչև 4 խաղով: |
| 19. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկական զոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ կամ չի շարունակվել | Առաջացնում է խախտում թույլ տվածակումբի նկատմամբ, տուգանքի նշանակում.<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի (50,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության զրանցում 0:3 հաշվով:<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից մինչև հիսունապատիկի (25,000-ից մինչև 50,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության զրանցում 0:3 հաշվով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանհինգապատիկի (10,000-ից մինչև 25,000 ՀՀ դրամ) չափով, թիմի |

| | | |
|---|---|---|
| | | նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն։<br><br>Խախտում թույլ տված պաշտոնատար անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում են 5-10 խաղով և/կամ առաջացնում է խախտում թույլ տված ֆուտբոլիստների որակազրկում 5-8 խաղով։ |
| 20. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը չկայանալու կամ չշարունակվելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի (70,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0։3 հաշվով։<br><br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0։3 հաշվով։<br><br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն։ |
| 21. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը դադարել է, բայց դրանից հետո խաղը շարունակվել է և խաղի արդյունքի վրա չի ազդել | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով։<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով։ |
| 22. | Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակա-հատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու, երկրպագուների կողմից մրցավարների, պատվիրակի, տեսուչի, ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը, խաղադաշտ իրեր նետելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով, |

| | | |
|---|---|---|
| | | և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների: |
| 23. | Խաղի ժամանակահատվածում հյուր թիմի երկրպագուների կողմից մրցավարների, տեսուչի, ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը, խաղադաշտ իրեր նետելը | Առաջացնում է տուգանքի նշանակում<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ հյուր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ հյուր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 24. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում դաշտի տեր կամ հյուր թիմի երկրպագուների կողմից պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ պայթեցնելը, որի հետևանքով խաղը չի դադարել | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 25. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում դաշտի տեր կամ հյուր թիմի երկրպագուների կողմից պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ պայթեցնելը, որի հետևանքով խաղը դադարել է, բայց դրանից հետո շարունակվել է | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսունապատիկի (30,000-ից մինչև 50,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում մինչև նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀդրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| | | • Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի (15,000-ից մինչև 25,000 ՀՀ դրամ) չափով և դաշտի տեր ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև տասնհինգապատիկի (15,000 ՀՀդրամ) չափով: |
| 26. | Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում դաշտի տեր կամ հյուր թիմի երկրպագուների կողմից պայթուցիկ հրավառություններ, ճայթրուկներ պայթեցնելը, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել | Առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի (50,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, և տվյալ թիմը մինչև 3 խաղ անցկացնում է առանց հանդիսատեսի, մեղավոր թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում: Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ13, Մ14, Մ15տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից մինչև հիսունապատիկի (25,000-ից մինչև 50,000 ՀՀ դրամ) չափով, և տվյալ թիմը մինչև 3 խաղ անցկացնում է առանց հանդիսատեսի, մեղավոր թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում: Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանհինգապատիկի (10,000-ից մինչև 25,000 ՀՀ դրամ) չափով, մեղավոր թիմի նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն: Դաշտի տեր ակումբի նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի մինչև տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով: |
| 27. | Խաղի ժամանակահատվածում ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց անպարկեշտ, անվայել վարքագծի ու ոչ սպորտային վարքագծի դեպքում | Խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց նկատմամբ առաջացնում է նկատողություն և/կամ ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում մինչև 5 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ |

| | | |
|---|---|---|
| | | • Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկում է/են 2- 5 խաղով, և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 28. | Խաղը սպասարկող անձնակազմի կամ դրա որևէ անդամի հասցեին թիմի անձնակազմի անդամների, պաշտոնատար անձանց և/կամ ֆուտբոլիստների կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալու (ինչպես նաև հայհոյելու), հարվածելու, հարվածելու փորձ կատարելու դեպքում | Թիմի անձնակազմի անդամները և/կամ պաշտոնատար անձինք զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 1 տարի ժամկետով և/կամ զրկվում են իրենց մարզչական արտոնագրից, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում են մինչև 1 տարի ժամկետով, և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 29. | Խաղի ժամանակահատվածում պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամ/ներ/ի և/կամ ֆուտբոլիստ/ներ/ի կողմից մրցավար/ներ/ի կայացրած որոշման/ների նկատմամբ անհամաձայնության դրսևորումների/ ժեստերի դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>Պաշտոնատար անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամները զրկվում են իրենց ծառայողական պարտավորությունները իրականացնելու իրավունքից մինչև 10 խաղով, իսկ ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկվում է/են մինչև 5 խաղով: |

| | | |
|---|---|---|
| 30. | Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների և/կամ ոստիկանների բացակայության և/կամ ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում դաշտի տեր ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով: |
| 31. | Առաջնությունների հանդիպումների արձանագրության հիմնական կազմին և պարտադիր փոխարինվող ֆուտբոլիստներին սահմանված խաղային ժամանակահատված չտրամադրելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբ/ներ/ի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով:<br>Եթե փոխարինման ընթացակարգի խախտումը չի գերազանցում 3 րոպեն, ապա այն հաշվի չի առնվում: |
| 32. | Առաջնությունների ժամանակ նշված խաղացողների սահմանված նվազագույն քանակ չպահպանելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբ/ներ/ի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկի (3,000 ՀՀ դրամ) չափով: |
| 33. | Նախախաղային խորհրդակցությանը սահմանված անձանց ուշանալու կամ չմասնակցելու դեպքում | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանք մեղավոր ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկից մինչև հնգապատիկի (2,000-ից մինչև 5,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև եռապատիկի (3,000 ՀՀ դրամ) չափով: |
| 34. | Խաղն ուշացումով սկսելը | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսունապատիկի (10,000-ից մինչև 50,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև |

| | | |
|---|---|---|
| | | երեսնապատիկի (5,000-ից մինչև 30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 35. | Խաղի արձանագրությունում չնշված անձանց տեխնիկական գոտում գտնվելու, ինչպես նաև այդ գոտում գտնվողների համար սահմանված պահանջների խախտման դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև տասնհինգապատիկի (15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 36. | Խաղին որակազրկված ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի մասնակցության դեպքում | Առաջացնում էակումբի նկատմամբ տուգանքի նշանակում․<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում,<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով, թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում:<br>• Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն:<br>Խախտում թույլ տված թիմի անձնակազմի անդամը զրկվում է պարտականությունների իրականացման իրավունքից 1 խաղով, իսկ ֆուտբոլիստը որակազրկվում է 1 խաղով: |
| 37. | Խաղին չհայտավորված կամ խաղի արձանագրության մեջ չնշված ֆուտբոլիստի կամ թիմի անձնակազմի անդամի մասնակցության դեպքում | Առաջացնում էակումբի նկատմամբ տուգանքի նշանակում․<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի (30,000 ՀՀ դրամ) չափով, թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում,<br>• Մ13, Մ14, Մ15 տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով, թիմին 0:3 հաշվով տեխնիկական պարտության գրանցում: |

| | | |
|---|---|---|
| | | • Մ12 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով, թիմի նկատմամբ նախազգուշացում կամ նկատողություն: |
| 38. | Թիմ/եր/ի կողմից կեղծ փաստաթղթերով հայտավորված/վերահայտավորված ֆուտբո-լիստների հայտնաբերման դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի (25,000 ՀՀ դրամ) չափով:<br>Պատասխանատու մարզիչը զրկվում է ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 2 տարի ժամկետով, և տվյալ ֆուտբոլիստ/ներ/ի մասնակցությամբ բոլոր խաղերում Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների թիմ/եր/ին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ Մ12 և ցածր տարիքային առաջնությունների թիմ/եր/ին՝ նկատողություն: |
| 39. | Հանդիպման մրցակից թիմ/եր/ի կողմից ուրիշ ֆուտբոլիստի անձնագրով կամ քարտով խաղին ֆուտբոլիստի մասնակցության կամ մասնակցության փորձ անելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քառասունապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանապատիկի (40,000 ՀՀ դրամ) չափով<br>Մասնակցության դեպքում Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18 տարիքային առաջնությունների թիմ/եր/ին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ Մ12 և ցածր տարիքային առաջնությունների թիմ/եր/ին՝ նկատողություն: |
| 40. | ՀՖՖ-ին ոչ հավաստի կամ աղավաղված տվյալների, տեղեկության տրամադրման դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև քսանապատիկի (20,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչև տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 41. | Հանդիպման ժամը, օրը կամ մարզադաշտը տեղափոխելու անհրաժեշտության դեպքում համապատասխան գրությունը սահմանված ժամկետներում ՀՖՖ չներկայացնելու դեպքում | Առաջացնում է նկատողություն մեղավոր ակումբ/ներ/ի նկատմամբ և/կամ տուգանքի նշանակում<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի (5,000-ից մինչև 10,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկից մինչև հնգապատիկի (3,000-ից մինչև 5,000 ՀՀ դրամ) չափով: |
| 42. | ՀՖՖ-ի պահանջով երկու աշխատանքային օրվա ընթացքում բացատրագիր չներկայացնելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով: |
| 43. | Կորցրած ՀՖՖ նույնականացման քարտի կրկնօրինակը տրամադրելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի (10,000 ՀՀ դրամ) չափով յուրաքանչյուր քարտի համար: |
| 44. | ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումը կամ քաղվածքը ստանալուց հետո ակումբի կողմից տուգանքը 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ չմարած տուգանքի 20%-ի չափով: |
| 45. | Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի, կամ ՈՒԵՖԱ, ՖԻՖԱ, ՀՖՖ այլ կանոնակարգերի դրույթների խախտումների դեպքում | Առաջացնում է նկատողություն և/կամ տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ մինչև նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի (50,000 ՀՀ դրամ) չափով:<br>Այն դեպքերում, երբ խախտման հետևանքով ենթադրվում է տեխնիկական պարտության կիրառում, մեղավոր թիմի նկատմամբ գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով: |

## Զ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ, ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| հ/հ | Կարգապահական խախտումներ | Կիրառվող պատժամիջոցներ |
|---|---|---|
| 1. | Առաջնության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 5-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով: |
| 2. | Առաջնության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 10-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 2 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի ութապատիկի (8,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով: |
| 3. | Առաջնության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 11-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով x N*,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով x N*:<br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 4. | Առաջնության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 3-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով, |

| | | |
|---|---|---|
| | | • Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկի (3,000 ՀՀ դրամ) չափով: |
| 5. | Առաջնության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 5-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/պաշտոնատար անձի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 2 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի 10,000 ՀՀ դրամ) չափով<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով: |
| 6. | Առաջնության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 6-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/պաշտոնատար անձի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով x N*,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով x N* :<br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 7. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 2-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է Գավաթի խաղարկությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով: |
| 8. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում ֆուտբոլիստի 3-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է Գավաթի խաղարկությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով x N*, |

| | | |
|---|---|---|
| | | • Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով x N*:<br><br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 9. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 2-րդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով: |
| 10. | Գավաթի խաղարկության տվյալ խաղաշրջանում թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի 3-րդ և ամեն հաջորդ զգուշացում (դեղին քարտ) ստանալը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով x N*,<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով x N*:<br><br>* N – զգուշացումների (դեղին քարտերի) քանակը: |
| 11. | Առաջնության նույն խաղում 2 զգուշացում ստանալը, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է առաջնությունում ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br><br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով: |
| 12. | Առաջնության նույն խաղում 2 զգուշացում ստանալը, որի հետևանքով թիմի անձնակազմի անդամը/ակումբի պաշտոնյան հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների ընթացքում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում 2 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ |

| | | |
|---|---|---|
| | | • Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի (5,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկի (3,000 ՀՀ դրամ) չափով: |
| 13. | Առաջնության խաղին մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում 1 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի (2,000 ՀՀ դրամ) չափով: |
| 14. | Գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտման դեպքում, որի հետևանքով ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է ֆուտբոլիստի որակազրկում 2-5 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի (5,000-ից մինչև 10,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկից մինչև հնգապատիկի (3,000-ից մինչև 5,000 ՀՀ դրամ) չափով: |
| 15. | Բռնարարքը ոչ խաղային դրվագում, խաղի ժամանակահատվածում մրցակցի, թիմակցի, որևէ թիմի անձնակազմի անդամի, ակումբի պաշտոնյայի, խաղը սպասարկող անձնակազմի, հանդիսատեսի կամ ցանկացած այլ անձի նկատմամբ, որի համար ֆուտբոլիստը կամ ակումբի պաշտոնյան հեռացվել է խաղադաշտից | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի, ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում 2-8 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսունապատիկի (10,000-ից մինչև 50,000 ՀՀ դրամ) չափով:<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև երեսնապատիկի (5,000-ից մինչև 30,000 ՀՀ դրամ) չափով: |
| 16. | Խաղադաշտում կամ դրա հարակից տարածքում ծեծկռտուքին մասնակցելը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում 5-10 խաղով, և մեղավոր ակումբ/ներ/ը տուգանվում է/են |

| | | |
|---|---|---|
| | | • Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի (10,000-ից մինչև 30,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնհինգապատիկի (5,000-ից մինչև 15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 17. | Խաղընկերոջ, մրցակցի, թիմերի անձնակազմի անդամների, պաշտոնատար անձանց և հանդիսատեսների հասցեին կամ անհասցե վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ թույլ տալը, ինչպես նաև վերոնշյալ անձանց հարվածելը կամ հարվածելու փորձ կատարելը | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 1 տարի ժամկետով, իսկ ֆուտբոլիստը որակազրկվում է մինչև 10 խաղով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի (10,000-ից մինչև 30,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնհինգապատիկի (5,000-ից մինչև 15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 18. | Խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ հաշվեհարդարի փորձի կամ հաշվեհարդարի դեպքում | Թիմի անձնակազմի անդամները և/կամ պաշտոնատար անձինք զրկվում են իրենց մարզչական արտոնագրից և առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում կամ ֆուտբոլիստի որակազրկում 1-ից 2 տարի ժամկետով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի (10,000-ից մինչև 30,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնհինգապատիկի (5,000-ից մինչև 15,000 ՀՀ դրամ) չափով: |
| 19. | Խաղի կանոններում նշված հեռացման արժանի այլ խախտում իրականացնելու համար թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի տեխնիկական գոտուց հեռացման դեպքում | Առաջացնում է թիմի անձնակազմի անդամի/ակումբի պաշտոնյայի ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 6խաղ ժամկետով և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Մ16, Մ17, Մ18 առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի (10,000-ից մինչև 20,000 ՀՀ դրամ) չափով, |

| | | |
|---|---|---|
| | | • Մ15 և ցածր տարիքային առաջնությունների դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի (5,000-ից մինչև 10,000 ՀՀ դրամ) չափով։ |

## Է. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

| h/h | Կարգապահական խախտումներ | Կիրառվող պատժամիջոցներ |
|---|---|---|
| 1. | Կանանց ֆուտբոլի մրցումների մասնակցության Հավաստագիր ներկայացնելուց հետո մինչև խաղաշրջանի սկիզբը տվյալ թիմի մրցման մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ.<br>• Բարձրագույն խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով<br>• Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի (70,000 ՀՀ դրամ) չափով: |
| 2. | Սահմանված հայտավորման ժամկետները խախտելը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի (1,000 ՀՀ դրամ) չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար: |
| 3. | Առաջնության ընթացքում մրցմանը սեփական դիմումի համաձայն թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը | Առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ<br>• Բարձրագույն խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով,<br>• Առաջին խմբի առաջնության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով,<br><br>Առաջացնում է թիմի հեռացում տվյալ առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում: |
| 4. | Առաջնության ընթացքում անհարգելի պատճառով թիմի չներկայանալը խաղին | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրապատիկի (150,000-ից մինչև 300,000 ՀՀ դրամ) հինգհարյուրապատիկի չափով, թիմին տեխնիկական պարտության զրանցում 0:3 հաշվով: |
| 5. | Առաջնության ընթացքում անհարգելի պատճառով թիմի երկու խաղին չներկայանալը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է թիմի հեռացում առաջնությունից և տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից զրկում և տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (200,000-ից ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | դրամ) չափով; |
| 6. | Առաջնության ընթացքում երեք տեխնիկական պարտություն (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ կետում նշված դեպքերի) ստանալը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է թիմի հեռացում առաջնությունից և զրկում տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումներին, այլ մրցաշարերի խաղերին մասնակցելու իրավունքից և առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երեքհարյուրապատիկի (300,000 ՀՀ դրամ) չափով: |
| 7. | Առաջնության խաղի ժամանակահատվածում թիմի մարզադաշտ մուտք գործելուց հետո թիմի կողմից խաղադաշտ դուրս չգալը կամ խաղադաշտն ինքնակամ լքելը, որի հետևանքով խաղը չի կայանում կամ չի շարունակվում | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրհիսունապատիկի (150,000 ՀՀ դրամ) չափով և թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն հոդվածով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակումակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև երկուհարյուրհիսունապատիկի (250,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br><br>Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամները ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում է/են մինչև 5 խաղով և/կամ առաջացնում է ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 3 խաղով: |
| 8. | Առաջնության խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերիցորևէ մեկի՝ ֆուտբոլիստ/ներ/ի և/կամ թիմի անձնակազմի և/կամ պաշտոնատար անձանց ոչ պատշաճ, ոչ մարզական գործողությունների պատճառով խաղի չմեկնարկելը կամ չշարունակվելը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսունապատիկի (100,000-ից մինչև 150,000 ՀՀ դրամ) չափով, թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով: Սույն կետով նախատեսված խախտումը մեկից ավելի անգամ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրհիսունապատիկի (150,000-ից մինչև 300,000 ՀՀ դրամ) չափով, թիմի հեռացում առաջնությունից, տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկում:<br><br>Խախտում թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած ակումբի պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից |

| | | |
|---|---|---|
| | | զրկվում է/են մինչև 5 խաղով և/կամ առաջացնում է ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 3 խաղով: |
| 9. | Խաղի ժամանակահատվածում մրցակից թիմերի կողմից սույն հոդվածի 8-րդ կետում նշված խախտումների երկուստեք թույլ տալը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է երկու թիմերի նկատմամբ տեխնիկական պարտության գրանցում, տուգանքի նշանակում ակումբների նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև երկուհարյուրապատիկի (200,000 ՀՀ դրամ) չափով: Խախտումը թույլ տված կամ խախտման պատճառ հանդիսացած պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ն ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում է/են մինչև 5 խաղով և/կամ առաջացնում է ֆուտբոլիստ/ներ/ի որակազրկում մինչև 3 խաղով: |
| 10. | Առաջնության խաղի ժամանակահատվածում ակումբի պաշտոնատար անձանց, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստների այնպիսի գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում պատճառ է/են դարձել անկարգության/ների, որի/որոնց պատճառով խաղը չի մեկնարկել կամ չի շարունակվել | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է խախտում թույլ տված թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, ակումբի նկատմամբ տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսունապատիկի (100,000-ից մինչև 150,000 ՀՀ դրամ) չափով, թիմի տվյալ առաջնության մրցաշարային աղյուսակի ընդհանուր միավորների քանակից 3 միավորի իջեցում: Խախտման պատճառ հանդիսացած պաշտոնատար անձը/անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում է/են մինչև 5 խաղով, խախտում թույլ տված ֆուտբոլիստ/ներ/ը որակազրկում է/են մինչև 3 խաղով: |
| 11. | Սույն հոդվածի 10-րդ կետում նշված գործողությունների դեպքում, որը/որոնք մարզադաշտում և դրա շրջակա տարածքում առաջացրել են անկարգություններ, բայց խաղի մեկնարկի, շարունակության և/կամ արդյունքի վրա ազդեցություն չեն թողել | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրապատիկի (50,000-ից մինչև 100,000 ՀՀ դրամ) չափով, խախտում թույլ տված պաշտոնատար անձանց և/կամ թիմի անձնակազմի անդամների ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկում մինչև 10 խաղով և խախտում թույլ տված ֆուտբոլիստների որակազրկում մինչև 5 խաղով: |
| 12. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկական գոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով, խախտում թույլ տված պաշտոնյա/ներ/ը և/կամ թիմի անձնակազմի անդամ/ներ/ը զրկվում է/են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 5 խաղով, և/կամ |

| | | |
|---|---|---|
| | դադարել է, բայց խաղի արդյունքի վրա ազդեցություն չի թողել և խաղը շարունակվել է | առաջացնում է ֆուտբոլիստների որակազրկում մինչև 4 խաղով: |
| 13. | Խաղի ժամանակահատվածում տեխնիկական գոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը չի մեկնարկել և/կամ կամ չի շարունակվել | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է խախտում թույլ տված թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով, տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրհիսունապատիկի (150,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Խախտում թույլ տված պաշտոնատար անձինք և/կամ թիմի անձնակազմի անդամները ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից զրկվում են մինչև 5 խաղով, և/կամ առաջացնում է խախտում թույլ տված ֆուտբոլիստների որակազրկում մինչև 4 խաղով: |
| 14. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը չկայանալու կամ չշարունակվելու դեպքում | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է մեղավոր թիմին տեխնիկական պարտության գրանցում 0:3 հաշվով և տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 15. | Ակումբներից որևէ մեկի մեղքով խաղը դադարել է, բայց դրանից հետո խաղը շարունակվել է և խաղի արդյունքի վրա չի ազդել | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում մեղավոր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: |
| 16. | Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու, երկրպագուների կողմից մրցավարների, պատվիրակի, տեսուչի, ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը, խաղադաշտ իրեր նետելը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի չափով (50,000 ՀՀ դրամ) և/կամ մարզադաշտի որակազրկում տվյալ թիմի համար մինչև 3 խաղ և/կամ մինչև 3 խաղի անցկացում առանց հանդիսականների: |
| 17. | Խաղի ժամանակահատվածում հյուր թիմի երկրպագուների կողմից մրցավարների, տեսուչի, ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի անդամների և/կամ պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ, անհարգալից արարքներ թույլ տալը, խաղադաշտ իրեր նետելը | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում հյուր ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով:<br><br>Դաշտի տեր ակումբի նկատմամբ նկատողություն և/կամ տուգանք նվազագույն աշխատավարձի մինչև ութսունապատիկի (80,000 ՀՀ դրամ) չափով: |

| | | |
|---|---|---|
| 18. | Խաղի ժամանակահատվածում երկրպագուների, պաշտոնյա/ներ/ի, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստ/ներ/ի կողմից ռասիզմի, այլ խտրականության դրսևորում/ներ/ի և պրոպագանդման դեպքում, որի հետևանքով խաղը չի դադարել | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրապատիկի (100,000 ՀՀ դրամ) չափով: Խախտում թույլ տված պաշտոնյաները և/կամ թիմի անձնակազմի անդամները զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 5 խաղով, իսկ ֆուտբոլիստները որակազրկվում են մինչև 3 խաղով: |
| 19. | Խաղի ժամանակահատվածում երկրպագուների, պաշտոնյա/ներ/ի, թիմի անձնակազմի անդամների և/կամ ֆուտբոլիստ/ներ/ի կողմից ռասիզմի, այլ խտրականության դրսևորում/ներ/ի և պրոպագանդման դեպքում, որի հետևանքով խաղը դադարել է, բայց շարունակվել է | Կանանց բարձրագույն և առաջին խմբերի առաջնությունների դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված ակումբի նկատմամբ նվազագույն աշխատավարձի մինչև հարյուրհիսունապատիկի (150,000 ՀՀ դրամ) չափով: Խախտում թույլ տված պաշտոնյաները և/կամ թիմի անձնակազմի անդամները զրկվում են ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից մինչև 5 խաղով, իսկ ֆուտբոլիստները որակազրկվում են մինչև 3 խաղով: |
